Azg Ազգ

29 ՅՈՒՆԻՍ 2012 ՈՒՐԲԱԹ 118(4970)

ISSN: 1829-1651

Սուիցիդ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Օրեր առաջ «**Ազգում**» տպագրված եւ ՁԼՄ-ներին ուղղված բարոյականության կոչը, որով ինքնասպանի ոյիրը խնդրում էր նվազագույնի հասցնել իր եղբոր ինքնասպանության մանրամասների մասին լուրերը, քանի որ դրանք ծանր ազդեցություն կարող են ունենալ մոր վրա, մի տեսակ սթափեցնող նշանակություն ուներ: Վերջին շրջանում համարյա ամեն օր ինքնասպանությունների մասին տեղեկություններ ենք լսում, որոնք մահագությունների տեղիք են տալիս, ու բնական է, որ նորմալ մարդիկ կուզեին տեսնել պետության մահագվածությունը նախ, անհանգստացնող վիճակագրության առկայության պարագայում՝ պետության համապատասխան օղակների ինչ-որ ձեռնարկումներ, մասնագիտական շրջանակների հարեհաս օգնություն: Սակայն դրա փոխարեն օրավուր զարգանում է հատկապես միայն մի ուղղություն ավելի՝ լրատվամիջոցներում հոգեցունց մանրամասների մատուցումն ու սպառնագին տեղեկատվության խցացումը, քան թե

Էդվարդ Մունչ. «Ճչացողը»

ինչ-որ բան ենք լսում պետական կառույցի մահագության կամ ձեռնարկվելիք քայլերի մասին: Հիմա, երբ գիտությունն այնպես է զարգացել, որ ստեղծվել են հոգեբանական ներգործության զենքեր, զանգվածային պսիխոզի ավելի գործուն միջոցներ, երբ մեզ շրջապատող պետություններից երկուսն առնվազն կարող են մտածել այդ-պիսի միջոցները հայերի դեմ ուղղելու հնարավորությունը, այդպիս զենք կամ վարակիչ վիրուս դարձել է մեր տեղեկատվության միջոցներով մատուցվողը, երբ մանրամասն ներկայացվում են ինքնասպանության միջոցները, վայրը, երեւացող պատճառները, եւ շեշտը դրվում է ցնցող մանրամասների վրա՝ չպատկերացնելով, որ կարող են ընդօրինակելի դարձնել երեւույթը: Մեն-մի միակ բացատրությունը՝ ընթերցող շահողը, ոչ մի կերպ հավասար չէ տեղեկատվության գործած ավերին: Մինչդեռ երբ ամեն ինչի նայես կանխարգելման տեսանկյունից, այդ դեպքում սենսացիայի մատուցումն եւ ընթերցողի շահը տրամագծորեն կիակասեն իրար: Առայժմ մենք էլ մատուցենք սարսափելի վիճակագրությունն, ըստ որի վերջին տարիներին ինքնասպանությունները Հայաստանում աճի դինամիկա են արձանագրում՝ 2009 թվին՝ 498, 2010-ին՝ 592, 2011-ին 647 դեպք: Այս տարի երեւի ամեն օր համարյա ինքնասպանության մասին տեղեկություն ենք ստացել:

Տես էջ 3

Անանն առաջարկեց Սիրիայում ստեղծել «ազգային միասնության կառավարություն»

Սիրիայի գծով ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Կոֆի Անանը առաջարկել է այդ երկրում ստեղծել «ազգային միասնության կառավարություն»: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով դիվանագիտական աղբյուրներ:

Ըստ Կոֆի Անանի մտահղացման, «ազգային միասնության կառավարության» մեջ պետք է ընդգրկվեն ինչպես գործող իշխանության, այնպես էլ ընդդիմության ներկայացուցիչներ, չպետք է ընդգրկվեն ներքին երկխոսությանը խանգարող անձինք: Ռոյթերի աղբյուրները նշում են, որ տվյալ ձեւակերպումը փաստորեն ենթադրում է այդ կառավարությունից նախագահ Բաշար Ասադի բացառում:

Դիվանագետների տվյալներով, աշխարհի մեծ տերությունները, այդ թվում Ռուսաստանը, արդեն հավանություն են տվել Կոֆի Անանի գաղափարին: Սպասվում է, որ նրա առաջարկության մանրամասնությունները կքննարկվեն հունիսի 30-ին Ժնեւում Սիրիային նվիրված հանդիպման ժամանակ:

Սիրիայում վարչակարգի եւ ընդդիմության հակամարտությունը շարունակվում է 2011-ի մարտից: Արեւմուտքի երկրները եւ Պարսից ծոցի միապետությունները պահանջում են Բաշար Ա-

սադի հրաժարականը, մինչդեռ Ռուսաստանն ու Չինաստանը հանդես են գալիս գործող վարչակարգի պաշտպանությամբ:

ԵՄԽՎ-ում Մեծամորի ԱԷԿ-ի դեմ բանաձե՞ւ է նախապատրաստվում

«Մեծամորի ԱԷԿ-ը՝ մշտական սպառնալիք Հարավային Կովկասի ու Եվրոպայի համար» վերտառությամբ, ըստ «Ազերիպրես» գործակալության, բանաձեւի նախագիծ է շրջանառվում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում՝ ադրբեջանցի պատվիրակ Գանիրա Փաշաեւայի նախաձեռնությամբ: Վերջինիս վկայությամբ՝ բանաձեւի նախագիծը ընդունման է դրվելու ինչպես ԵԽԽՎ-ում բյուրոյում, այնպես էլ Եվրոպայի խորհրդի մյուս կառույցներում:

Նույն տեղեկատվության համաձայն, բանաձեւի նախագիծը ստորագրել են մոտ 25 պատվիրակներ: Ընդ որում, վերջիններիս ստորագրած բանաձեւի նախագիծն ուղղակի զավեշտալի է, իսկ ստորագրելու դրդապատճառները՝ թերեւս կռահելի, քանի որ բանաձեւը ոչ այնքան խոսում է շրջակա միջավայրի ու Կովկասի մասին, որքան տեղեկացնում, թե «Մեծամորի ԱԷԿ-ում ինչ-որ լուրջ բան լինելու դեպքում Ադրբեջանի կառավարությանը կմնա 24 ժամ էվակուացիայի համար»:

Որ ատոմակայանի առնչությամբ բազմիցս առավել քան մասնագիտական կառույցները գնահատականներ են հրապարակել, հանդիպումներ ու այցելություններ ունեցել, արդյունքում էլ տարբեր ծրագրեր են իրականացվում, այդ մասին ոչինչ չի նշվում նախագծում: Դրա փոխարեն նշվում է, թե «Հայաստանի անձարության» պայմաններում վեհաժողովին առաջարկվում է հատուկ զեկուցող նշանակել հարցի շուտափույթ ու մանրամասն քննության համար, «ձեւավորել գնահատող խումբ» եւ այլն:

Ադրբեջանին «սպառնացող» ատոմակայանի վտանգը նախագծում որպես սպառնալիք ներկայացված է նաեւ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի համար: Ա. Հ.

«Միջազգային» խորհրդաժողո՞վ, թե՞ «մեկ դերասանի թատրոն» Բաքվում

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի մայրաքաղաքում երեկ մեկնարկել է հերթական «միջազգային» խորհրդաժողովը՝ «Համատեղ ջանքեր հանուն Կովկասի աղագայի. անցած 20 տարիների դասերը»: Այն կազմակերպել է Իլհամ Ալիեւին առընթեր ռազմավարական հետազոտությունների կենտրոնը:

Այդ առթիվ ադրբեջանական մամուլը փորձում է տպավորություն ստեղծել, թե «միջազգային» խորհրդաժողովին ներկայացված են հարավկովասյան բոլոր երեք պետությունները: Մինչդեռ «հայկական կողմի ներկայացուցիչը» Ժիրայր Լիպարիտյանն էր, որ վաղուց ոչ միայն Հայաստանը չի ներկայացնում իբրեւ պետական կամ քաղաքական-հասարակական գործիչ, այլեւ ապրում է Միացյալ Նահանգներում եւ այդ երկրի քաղաքացի է: Հետեւաբար, Հայաստանը Իլհամ Ալիեւի կազմակերպած «դարակազմիկ» միջոցառմանը չի մասնակցել:

Խիստ արտառոց է նաեւ վրացական կողմի ներկայացվածությունը: Այդ երկրից մասնակցել է միջազգային հարաբերությունների եւ ռազմավարության հետազոտական հիմնադրամի ղեկավար Ալեքսանդր Ռոնդելին: Մինչդեռ Բաքուն նպատակահարմար էր գտել միջոցառմանը գործուղելու քաղաքագետ եւ խորհրդարանի պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովին:

Վերջինիս ելույթից արված մեջբերումների վրա էլ հարեւան երկրի լրատվամիջոցները հիմնականում կառուցել են միջոցառման տեղեկատվական ֆոնը: Նոր որեւէ գաղափար կամ հեռանկար Մուսաբեկովը չի հնչեցրել: Նա գրեթե բառ առ բառ կրկնել է իշխող վարչախմբի «հայեցակարգը»: Իսկ վերջինս հիմնված է այն բանի վրա, որ «տարածաշրջանի տնտեսական եւ քաղաքական, ինչպես նաեւ ռազմական առաջատարը» Ադրբեջանն է:

Մուսաբեկովը վերստին հիշեցրել է, որ Հարավային Կովկասի «տնտեսության 70 տոկոսը գտնվում է Ադրբեջանում»: Սա փաստի արձանագրում չէ միայն, այլ՝ «փաստարկ, որ Հարավային Կովկասի երկրներից Ադրբեջանը եւ Վրաստանը լիովին դուրս են եկել Մոսկվայի ազդեցությունից»: Մուսաբեկովը հույս է հայտնել, որ «չնայած վերլուծաբանների կանխատեսումներին, շուտով Հայաստանն էլ ձեռք կբերի լիակատար անկախություն»:

Ո՞րն է Ադրբեջանի «լիակատար» անկախությունը: Այն, որ «դուրս է եկել» Ռուսաստանի ազդեցության տիրույթից եւ մտել Թուրքիայի «հովանոցի՞» տակ: Եվ, Մուսաբեկովի կարծիքով, Հարավային Կովկասի «երջանկության» համար հարկ է, որպեսզի Հայաստա՞նն էլ ընտրի այդ ճանապարհը: Բայց չէ՞ որ յուրաքանչյուր երկիր ինքն է ընտրում, թե որտե՞ղ է իրեն ավելի հարմար, ի՞նչ համակարգում է ավելի անվտանգ, սեփական զարգացման ի՞նչ հեռանկար է տեսնում:

Ինքնիշխանության գլխավոր նախապայմանը ընտրության իրավունքի իրացումն է, ինչը Հայաստանի դեպքում եւ ԱՊՀ ու ՀԱՊԿ հետ ռազմավարական համագործակցության խորացումն է, եւ Եվրոմիության ու ՆԱՏՕ-ի հետ գործընկերային կապերի զարգացումը, եւ հարեւան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն ու զարգացումը: Դա ճիշտ եւ իրեն արդարացնող ընտրություն է՝ անկախ այն բանից, որ Ապշերոնում եւ Կասպից ծովի ընդերքում նավթ եւ գազ կա, եւ Ադրբեջանը դրանց արդյունահանումից եւ վաճառքից ֆինանսական «բում» է ապրում:

Տես էջ 2

Մուտքի հետացված արտոնագրերի համաձայնագիրը շուտով կձեւավորվի

Երեկ Երեւանում տեղի է ունեցել Հայաստանի եւ Եվրոպական միության միջեւ մուտքի վիզաների դյուրացման համաձայնագրի բանակցությունների երրորդ փուլը: Կողմերը գոհ են եղել այս տարի փետրվարին սկսված այս բանակցությունների ընթացքից ու լավատես էին բանակցությունները մոտ ապագայում ավարտելու հարցում: Մոտիկ ապագայում ձեւավորվելիք համաձայնագրով Հայաստանի քաղաքացիները՝ գիտնականները, ուսանողները, լրագրողները, գործարարները, սպորտի ու արվեստի գործիչները եւ մի շարք այլ խմբերի ներկայացուցիչներ Շենգենյան գոտու երկրներ մուտքի արտոնագրեր կստանան դյուրացված ընթացակարգով: Նախատեսվում է նաեւ նվազեցնել Շենգենյան մուտքի վիզաների գինը, երեխաների ու թոշակառուների համար ընդհանրապես անվճար դարձնել:

«Գագաթաժողովին Հայաստանի մասնակցությունը գոհունակություն պատճառեց մեզ»

«Սեւծովյան տնտեսական համագործակցություն» կազմակերպության գագաթաժողովի ավարտին հայտարարել է նախագահ Գյուլը

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԵՏՅԱՆ

Հունիսի 22-ին թուրքական ռազմաօդային ուժերի հետախուզական ինքնաթիռը, այսպես կոչված ուսումնավարժական թռիչք կատարելիս, ներխուժել էր Սիրիայի օդային տարածք: Սիրիական հակաօդային պաշտպանությունը վայր էր գցել ինքնաթիռը, երկու օդաչուների ճակատագիրն առ այսօր հայտնի չէ: Ըստ երեւույթին ոչնչացրել են:

Ամենայն հավանականությամբ, թուրքական կողմը այսպիսի ընթացք չէր ակնկալում: Ոչ էլ բավարարված է ՆԱՏՕ-ի բրյուսելյան արտակարգ նիստի «Թուրքիային համերաշխություն հայտնելու, իսկ Սիրիային ինքնաթիռը խոցելու համար դատապարտելու» անբովանդակ որոշումից: Թեեւ վարչապետ Էրդողանը շարունակում է հոխորտալ, թե Թուրքիան մեծ տերություն է, ոչ մեկի խամաճիկը չէ, անպատասխան չի թողնի Սիրիայի «ամբարտավանությունը», սակայն ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը հոխորտանքները որակում է «բլեֆ», արաբական երկրներն ու իսլամական աշխարհը հոխորտանքներին զուգընթաց ավելի ու ավելի են համոզվում, որ Թուրքիան հենց ԱՄՆ-ի խամաճիկն է, իսկ անգլիական մամուլը միջադեպին անդրադառնալիս չի խորշում թուրքական ինքնաթիռի ներխուժումը Սիրիա վերագրել հետախուզական առաջադրանքին:

Համենայն դեպս, հունիսի 22-ից թուրքական զանգվածային լրատվամիջոցներն անդադար ինքնաթիռի կործանման հարցն են արծարծում, եւ այս հարցը առանձնակի սրությամբ շարունակում է զբաղեցնել Թուրքիայի քաղաքական օրակարգը: Այսպիսի մոտեցմամբ միանգամայն տրամաբանական է, որ օրակարգից դուրս մնան երկրի համար ոչ պակաս, գուցե ավելի կարեւոր խնդիրներ: Դրանցից թերեւս կարելի է առանձնացնել թուրքական անվտանգության ուժերի եւ PKK-ի գրոհայիններ բախումները, որոնց հետեւանքով միայն հունիսին սպանվել է 23 զինծառայող, 21-ը՝ մայիսին էր սպանվել, ինչպես նաեւ՝ «Սեւծովյան տնտեսական համագործակցություն» կազմակերպության 20-ամյա հոբելյանին Ստամբուլում գումարված գագաթաժողովը:

Տես էջ 3

«Ակօս»-ի խմբագիր. «Առանց Արցախի հարցի լուծման ճամփան բռնելու հայ-թուրքական սահմանը չի բացվի»

«Եթե փոքրիկ, տնտեսապես աղքատ երկրի հետ ձեր հարցերը չեք կարող լուծել, մեծ հարցերի մեջ էլ չեք կարող լինել պահանջատեր եւ չեք կարող ձայն ունենալ: Սա է սկզբունքը», ասում է Ստամբուլում հրատարակվող «Ակօս» թերթի գլխավոր **Ռոպեր Քոփթաեը**՝ հավելելով, որ Հայկական հարցը Թուրքիայի համար սիմվոլիկ, բայց շատ կարեւոր խնդիր է:

«Եթե խնդիրը մակերեսորեն վերլուծենք, ապա Թուրքիան մեծ երկիր է, ունի տնտեսական խնդիրներ, քրդական հարցը: Այնքան շատ են պրոբլեմները, որ Հայկական հարցն օրակարգի առաջին տասնյակում է՝ ութերորդ կամ իններորդ հորիզոնականում: Սակայն եթե սկզբունքային եւ խորքային ուսումնասիրենք, ապա որքան արագ Հայկական հարցը լուծվի, այնքան արագ Թուրքիայում կհաստատվի ժողովրդավարություն: Քանի դեռ այս հանրապետության հիմքերի վրա հայի արյունն է, քանի դեռ Թուրքիան ազգայնամոլ սկզբունքների հիման վրա է հիմնված, անհնար է առաջ ընթանալ: Թուրքիան պետք է ընդունի կատարվածը», ասում է Քոփթաեը: Նրա ներկայացմամբ՝ խաղաղությունը պետք է արդարության հիման վրա ստեղծվի, այնպես, որ կողմերը ոչ պարտված լինեն, ոչ՝ հաղթած: «Երկու կողմն էլ պետք է շահած լինեն: Եթե միջին մակարդակի մտածող թուրքը վիրավորված զգա եւ վանգ զգա, ապա խաղաղությունը չի լինի: Թուրքիան կախյալ է, թուրքի որոշումն է կարեւոր, իսկ նոր թուրքը պետք է հասվի հայերի եւ իր պատմության հետ: Ցավոք, այս հարցում հայերը տկար են, անուժ եւ պասիվ: Պահանջատեր պետք է լինել, բայց ինչպե՞ս, ի՞նչ ճամփով, եւ կարեւորը՝ առանց վիրավորելու», ասում է Քոփթաեը՝ հավելելով, որ օդով քայլելու փոխարեն ոտքերը դնենք գետնին ու ռեալ աչքով նայենք իրականությանը:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված արտաքին գործընթացներին՝ Քոփթաեը այդ առնչությամբ խորհում է, թե ո՞րն է հայի համար առավել ճիշտ: «Եթե հարցը Սենատ բերելով կամ Օբամայի խոսքով՝ ավելի լուծելի դառնա, ես կընդունեմ ու չեմ վախենա, թե Թուրքիան ինչ կանի: Բայց ես զգում եմ, որ լուծումն այդ չէ, Սարկոզիի, Օբամայի լուծելիք հարցը չէ: Մենք՝ հայերս, ավելի խիզախ եւ ավելի լուրջ պետք է լինենք այս հարցը լուծելու համար եւ պետք է ջանանք Թուրքիան ժողովրդավար երկիր դարձնել: Հայկական հարցը Թուրքիայի ժողովրդավարության պայքարի փուլերից մեկը պետք է դառնա: Եթե դա այդպես չլինի, ապա Ֆրանսիան կամ ԱՄՆ-ն որոշ չափով կարող են ճնշում գործել Թուրքիայի վրա, բայց վստահ եմ, որ վերջում Թուրքիան կրկին կշահի: Եթե Ֆրանսիան կամ ԱՄՆ-ն ընտրելու լինեն՝ թուրքե՞րը, թե՞ հայերը, անպայման թուրքերն ավելի շատ ձայներ կհավաքեն: Եվ նրանց ազգային շահերը ավելի բարձր կլինեն հայերի պահանջներից:

Անդրադառնալով 2009-ին ստորագրված արձանագրություններին՝ Քոփթաեը նշում է, որ դրանք Հայաստանին մեծ օգուտ չբերեցին: «Արձանագրությունները հույս տվեցին, որ սահմանը կբացվի, դիվանագիտական հարաբերություններ կհաստատվեն, սակայն Թուրքիայում հակասություններ եղան: Կարծես թե Դավութօղլուն եւ Գյուլը մի ճամփա էին ընտրել, բայց Էրդողանը միջամտեց, ու այլ ճամփա թեքվեցին: Նա Դավութօղլուի եւ Գյուլի ճամփան փակեց եւ նրանց ձայնը կտրեց: Հայաստանի որոշումը երկրորդական եղավ, որովհետեւ Թուրքիան ավելի ուժեղ է, եւ Թուրքիան պարտադրեց: Էրդողանը Արցախի հարցը բարձրացրեց: Հույս չունեմ, որ առանց Արցախի հարցի լուծման ճամփան բռնելու հայ-թուրքական սահմանը բացվի: Սա է Էրդողանի քաղաքական գիծը»:

«Ակօս»-ի խմբագիրը չի ցանկանում Օբամայի օրինակով ոգեւորվել Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի խոսքերից: «Օլանդը հայերի համար թերեւս ավելի դրական է ընկալվում: Ֆրանսիայի պետական կորիզը Թուրքիային շատ կարեւորություն է տալիս եւ չի ուզում հարաբերությունները վատացնել: Օլանդը գալով քաղաքականության՝ առավել մանրամասն կծանոթանա իրական վիճակին ու այլ քաղաքականություն կվարի: Այս առումով Ֆրանսիայից շատ բան չեմ սպասում», ասում է նա՝ հավելելով, որ Թուրքիան առավել դրական է գնահատում Օլանդին: Պատճառն այն է, որ Սարկոզին ժխտական վերաբերմունք ուներ Թուրքիայի՝ մանավանդ Թուրքիայի Եվրոմիություն ընդգրկվելու վերաբերյալ: «Օլանդի վերաբերմունքն ավելի մեղմ է: Թուրքերն էլ են սպասողական վիճակում, թե նոր նախագահը ինչ կանի: Սակայն ես այն համոզումն ունեմ, որ Ֆրանսիան եւ ԱՄՆ-ն չեն ցանկանում Թուրքիան կորցնել»: Ռոպեր Քոփթաեը շեշտում է, որ Թուրքիան ներկայացնում է, թե իբր արաբական աշխարհում շատ ինքնավստահ է իրեն զգում, բայց դա մակերեսային է: «Խոր ազդեցություն չունի: Թուրքիան այդ ինքնավստահության հարցում սխալվում է: Էրդողանը որոշակի ազդեցություն ունի, որովհետեւ արաբների սրտին ավելի մոտ է նրա ոճը, բայց իրականությունն այն է, որ ԱՄՆ-ն Թուրքիային դեր է տվել, եւ նա խաղում է: Այդ հաշվածում կարեւորը դերակատարները ԱՄՆ-ն, Չինաստանն ու Ռուսաստանն են. Թուրքիան երկրորդական է եւ գիտի այդ մասին, բայց անընդհատ խոսում է իր դերակատարության մասին՝ ներքին քաղաքականության համար, որ ուժեղ եւ լավ իմիջ ունենա»:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստամբուլ, Թուրքիա

Լրագրողական այցի ծրագիրն իրականացվել է «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերություններին» նախագծի շրջանակներում, «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի կողմից եւ USAID-ի ֆինանսավորմամբ:

«Միջազգային» խորհրդաժողո՞վ, թե՞ «մեկ դերասանի թատրոն» Քափվում

1-ին էջից

Եթե նավթը եւ գազը «ինտեգրացման» եւ պետությունների՝ իրենց ազգային շահերը տնտեսական «հետագա բարգավաճման հեռանկարին զորհաբերելու գաղափարն» է, որ Իլհամ Ալիեւը այս անգամ փորձել է մատուցել «միջազգային խորհրդաժողով» փաթեթավորմամբ, ապա վստահաբար կարելի է ասել, որ ոչինչ չի ստացվել: Նույնիսկ այն դեպքում, երբ տրավորություն է ստեղծվել, որ Ադրբեջանը եւ Վրաստանը «նույն նավակում են, իսկ Հայաստանը ոչ մի կերպ չի հասկանում իր շահը»:

Վրաստանի պարագայում դատողություններ չենք անում, բայց եւ չենք կարող անտեսել, որ վրաց-ադրբեջանական հարաբերությունների աղագան այնքան էլ անամպ չի պատկերվում: Ռեժիմները, ինչպես Սաակաշվիլիի էքսցենտրիկ վարչակարգն է, անցողիկ են: Իսկ Վրաստանի ազգային շահը՝ մնայուն, եւ պահանջելու է Ադրբեջանի տնտեսական ու դեմոգրաֆիկ էքսպանսիան զսպելու քայլեր:

Ինչ վերաբերում է Հայաստանին եւ հայ ժողովրդին, ապա ընտրությունն արդեն իսկ կատարված է. «մեկ դերասանի թատրոնը», որ Իլհամ Ալիեւի սցենարով Ադրբեջանն է փորձում «բեմականացնել» Կովկասի աշխարհաքաղաքական տարածքում, ի սկզբանե փորձարկվել է Լեռնային Ղարաբաղում՝ խորհրդային «ինտերնացիոնալիզմի» դրոշի տակ:

Եվ ձախողվել է: Հարավային Կովկասում կայունության եւ ինտեգրացման աղբյուրը ոչ թե մեկ «դերակատարի» դոմինանտության «ընդունումն է» մյուսների կողմից եւ նրա «շուրջը համախմբումը», այլ՝ յուրաքանչյուր սուբյեկտի ինքնուրույնությանը եւ ընտրությանը հարգանքով վերաբերվելու հիմքով բազմաոլանային համագործակցությունը: Միայն այդ դեպքում է հնարավոր փայփայել տարածաշրջանի հաղաղ եւ անվտանգ զարգացման հեռանկարը: Եվ, ի դեպ, դա է հուշում անցած 20 տարվա հիմնական դասը՝ ուժով «համագործակցություն» չի ստեղծվում: Եթե անգամ խոսքը միայն տնտեսական ներուժի մասին է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԴԵՐԸ

Տեղեկատվական դարաշրջանի դերը՝ ուսանողների գնահատմամբ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն խրախուսել է էսսե մրցույթի հաղթողներին

ՎիվաՍել-ՄՏՍ-ի կարիերայի զարգացման ծրագրի շրջանակներում հայտարարված էսսե մրցույթի երեք հաղթողներն արժանացել են պլանշետային HTC համակարգչի, Blackberry 9700 եւ Galaxy Nexus S սմարտֆոններ: Խրախուսական պարգեւներ են ստացել նաեւ տարբեր բուհեր ներկայացնող եւս 8 ուսանող:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն ամփոփել է մայիսին հայտարարած մրցույթի արդյունքները: Էսսեների միջոցով տեղեկատվական դարաշրջանի դերը գնահատելու համար նախապես առաջարկվել են հատուկ մշակված թեմաներ:

Ո՞րն է համացանցի դերը հասարակության կյանքում: Ինչպիսի՞ն կարող է լինել բջջային ինտերնետի ազդեցությունը կրթության ոլորտում եւ առօրյա կյանքում: Ո՞րն է դրա զարգացման հաջորդ փուլը: Կարո՞ղ է, արդյոք, սոցիալական մեդիան փոխել կյանքը: Ներկայացված թեմաների շրջանակներում մրցույթին մասնակցելու հնարավորություն է տրվել բոլոր նրանց, ովքեր հավատարիմ են մնացել նախապես հայտարարված կանոններին:

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորի էլեկտրոնային կայքին հղված բոլոր աշխատանքները գնահատվել են անանուն ստուգման սկզբունքով: Առանձնահատուկ կարեւորվել է հետազոտությունների ընթացքում առցանց տեղեկատվական աղբյուրների կիրառումը:

«Հաջողության հասնելու առաջին քայլն սկսվում է ձգտման պատրաստակամությունից: Կարեւոր է նաեւ տեղեկացված լինելու պայմանը: Համացանցը եւ թվային ապագա ենթադրող տեխնոլոգիաները տալիս են այդ հնարավորությունը: Դրանցից արդյունավետ օգտվելու ընտրությունը ձերն է: Փորձեք կիրառել համակարգված մոտեցում եւ գնահատել սովորելու համար առկա միջավայրը: Նորարար տեխնոլոգիաները տալիս են ժամանակի անհարկի կորուստը կրճատելու եւ առավելագույն արդյունավետությամբ մասնագիտանալու հնարավորություն»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Էսսե մրցույթում գլխավոր մրցանակի արժանացած ուսանողներից մեկը՝ Էլեոնորա Մկրտչյանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանող է: Հաջորդ երկուսը՝ Արման Սերեդան եւ Եկատերինա Մարտիրոսյանը, Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության եւ ինֆորմատիկայի ինստիտուտի երեւանյան մասնաճյուղի ուսանողներ են: Նրանց համապատասխանաբար տրվել են պլանշետային HTC համակարգիչ, Blackberry 9700 եւ Galaxy Nexus S սմարտֆոններ:

Սոչիում արեւային էներգիայի օգտագործման կոնֆերանս

Խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը հրավիրում է անհատների, ընկերությունների եւ ասոցիացիաների մասնակցելու հուլիսի 15-ին Սոչիում բացվող արեւային էներգիայի օգտագործման եւ էկոլոգիապես մաքուր ճաշատեսակների մրցույթին:

Մրցույթի կազմակերպիչն է Կամավորների մշակութային միջազգային կենտրոնը (ԿՄՄԿ), որը պատրաստ է օգնել մասնակիցներին ձրի հյուրընկալել իր տարածքում հուլիսի 14-16-ը, պայմանով, որ նրանք իրենց հետ բերեն անհրաժեշտ սարքավորումները, բնապատկերն ու «տաղանդը»: Հավելյալ մանրամասնությունների համար զանգահարել Հայաստանում պրոֆ. Վահան Համազասպյանին (+374 - 93 35 95 53), արտերկրում՝ միջազգային համակարգող Վ. Մելքոնյանին (+33 - 637 14 86 43) կամ այցելել vasken-consulting@aol.com կայքը:

Հ. Ծ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ հաղորդագրով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԵՄ-ն առանձնակի չի նշում մայիսի 6-ի ընտրությունների խնդիրները, բայց գումար տալուց առաջ սպասում է 2013-ի ընտրություններին

Սարգսյան-Էշթոն հանդիպման արդյունքները

Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Քեթրին Էշթոնն իր մտահոգությունն է հայտնել հունիսի սկզբին Հայաստանի ու Ադրբեջանի սահմանին, նաեւ Շփման գծում տեղի ունեցած «լուրջ զինված միջադեպերի» առնչությամբ, ափսոսանք հայտնելով կորուստների առնչությամբ:

Հունիսի 27-ին Բրյուսելում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումից հետո տարածված հաղորդագրության համաձայն, Էշթոնը Հայաստանին եւ Ադրբեջանին, «որպես գործընկեր երկրների», կոչ է արել ջանք գործադրել հասնելու մադրիդյան սկզբունքների շուրջը համաձայնության՝ ամբողջապես կատարելով Մինսկի խմբի շրջանակներում ստանձնած իրենց հանձնառությունները: Էշթոնն ավելացրել է, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում առաջընթացը կենսական նշանակություն ունի, եթե ԵՄ-ի հետ Հայաստանի քաղաքական ու տնտեսական ինտեգրացիան պետք է իրագործվի ողջ ներուժով:

Հայտարարությամբ նաեւ տեղեկացվում է, որ Էշթոնն ու Սարգսյանը քննարկել են ԵՄ-Հայաստան հարաբերությունները, Էշթոնն էլ ողջունել է Հայաստանի իշխանությունների ջանքերը խորհրդարանական ընտրություններն առավել թափանցիկ ու մրցակցային անցկացնելու առումով, բայցեւ ընդգծել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության զեկույցում նշված մի շարք հարցերը լուծելու անհրաժեշտությունը՝ 2013-ի նախագահական ընտրություններին ընդառաջ ամբողջապես բավարարելու ժողովրդավարական միջազգային սանդարտները:

Հայաստանի նախագահի նստավայրից պաշտոնական հաղորդագրությունն էլ տեղեկացնում է, որ Բելգիա աշխատանքային այցի ընթացքում Քեթրին Էշթոնի հետ հանդիպմանը Սարգսյանը վերահաստատել է Եվրոպական միության հետ Հայաստանի սերտ համագործակցության պատրաստակամությունը ու ընդգծել, որ անկախացումից ի վեր ԵՄ-ի հետ մեր երկրի մերձեցումը եւ եվրոինտեգրման քաղաքականությունը եղել եւ շարունակում են մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարեւորագույն առաջնահերթություններից:

Հետաքրքրական է, որ «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում էլ ԵՄ ընդլայնման ու հարեւանության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի խոսնակ Փիթեր Սանոն հայտարարել է, որ Եվրոմիությունը առայժմ հետաձգում է Հայաստանին ֆինանսապես օժանդակելու նպատակով խոստացած դոնորների համաժողովը՝ ակնարկելով, որ խորհրդարանական ընտրությունները լիովին չեն արդարացրել ակնկալիքները, եւ այժմ Բրյուսելում սպասում են 2013-ի նախագահական ընտրություններին:

«Մայիսին Հայաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունները հիմնականում դրական անցան, սակայն կան հարցեր, որոնք լուծում են պահանջում, եւ կախված այն հանգամանքից, թե ինչպես Հայաստանը կարձագանքի այդ խնդիրներին՝ 2013-ի նախագահական ընտրությունները ազատ եւ արդար անցկացնելու առումով, առավել հստակ կլինի՝ երբ է անցկացվում այս համաժողովը, ինչպես նաեւ՝ ինչ կարող է անել Եվրոմիությունը Հայաստանին է՛լ ավելի աջակցելու եւ մեր օրակարգում առկա բոլոր ծրագրերը կատարելու ուղղությամբ», նշել է Սանոն:

Թեեւ Քեթրին Էշթոնը որեւէ նման մոտեցման հեռավոր արձագանքն իսկ չի հնչեցրել, հասկանալի է, որ նման ուղերձը Հայաստանին հասցնում է ԵՄ ցածր ասպիրանտի չինովնիկը, ընդ որում, պարզաբանելով, թե անհրաժեշտ է առաջիկա նախագահական ընտրություններից առաջ հարթել այն բացթողումները, որոնք արձանագրվել են խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ միջազգային չափանիշներին լիովին համապատասխան ընտրություններ անցկացնելու համար»: Ասվածի պոչին էլ ավելացնում. «Բացի այդ, անհրաժեշտ է ավելացնել ջանքերը Մինսկի խմբի առաջարկած հիմնարար սկզբունքների շուրջը համաձայնության հասնելու համար, ակտիվացնել պայքարը կոռուպցիայի դեմ, ինչպես նաեւ ամրապնդել դատական համակարգի անկախությունը»:

Այս ամենն այնքանով է կարեւորվում, որ դոնորների համաժողով ասվածի նման հավաքներում լուրջ ֆինանսական կառույցների՝ Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի եւ այլնի, նաեւ զարգացած երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ ներկայացվում են դժվար իրավիճակում հայտնված երկրների խնդիրներն ու ծրագրերգումարներ առաջարկում դրանց լուծման համար:

Թե որքան գումար կարող է հավաքվել այս՝ դեռեւս նախապատրաստվող համաժողովի ընթացքում, Եվրոմիության ներկայացուցիչը դժվարացել է նշել, միայն կրկին շեշտելով, որ դրանից առաջ Հայաստանի իշխանությունները դեռ պետք է մի շարք քայլեր կատարեն:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Գագաթաժողովին Հայաստանի մասնակցությունը գոհունակություն պատճառեց մեզ»

1-ին էջից

Ինչպես հայտնի է, այս կազմակերպությանն անդամակցում է 12 պետություն: Հայաստանը սամբուլյան գագաթաժողովին ներկայացել էր փոխարտգործնախարարի մակարդակով, հակառակ թուրքական կողմի՝ նախ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ապա արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին հրավիրելու համառ ձեռնարկումներին:

Դրանք թերեւս պետք է պայմանավորել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հունիսի 4-ի երեւանյան այն շեշտադրումներով, ինչպիսիք են «Հայ-թուրքական նորմալացման գործընթացը ծավալել առանց նախապայմանների» եւ «Գնդակը Թուրքիայի դաշտում է», առավել եւս՝ արտգործնախարար Նալբանդյանի հայտարարությունը. «Բանակցություններ չեն կարող լինել, դրանք ավարտվել են արձանագրությունների ստորագրումով, որոնց Թուրքիան չի ցանկանում հարգել: Չեմ կարծում, որ Թուրքիան իրավունք ունի նախապայմաններ առաջ քաշելու»:

«Սեւծովյան տնտեսական համագործակցություն» կազմակերպության հոբելյանական սամբուլյան գագաթաժողովի ավարտին, որին, ի դեպ, մասնակցել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, հրավիրվել էր մամուլի ասուլիս: Ինչպես հունիսի 27-ին նշել է «Ռադիկալը», ասուլիսին մասնակցել է նաեւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը: Նա, ի պատասխան «Ինչպե՞ս եք պատկերացնում տնտեսական համագործակցությունը Հայաստանի հետ, երբ Թուրքիայի հայկական սահմանը փակ է» հարցին, ասել է. «Թուրքիան բարի կամք դրսեւորեց, շնորհիվ դրա Հայաստանն անդամակցեց կազմակերպությանը: Այսօր քննարկել ենք: Ցավոք, մեր տարածաշրջանում կան որոշ խնդիրներ: Առկա են նաեւ տարաձայնություններ: Ամեն կերպ ջանում ենք, որ հաղթահարվեն այս տարաձայնությունները: Որքան հաղթահարվեն այս տարաձայնություններն ու վստահության մթնոլորտ հաստատվի, այնքան կզարգանա համագործակցությունն ու առեւտուրը:

Չենք կարող անտեսել առկա խնդիրները: Սակայն անհրաժեշտ է, որ բոլորս բարի կամքով աշխատենք լուծել եւ ձերբազատվել այս խնդիրներից: Նպատակը սա է: Խնդիրներ կան, ինչպես դուք նշեցիք: Կա նաեւ այս խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ բարի կամք, որը բոլորն են դրսեւորում: Հուսով եմ, որ այս միջոցառումները կնպաստեն եւ պատճառ կդառնան դրանց կարգավորման համար: Գագաթաժողովին Հայաստանի՝ որպես լիարժեք անդամի, մասնակցությունը, ինչ խոսք, գոհունակություն պատճառեց մեզ: Ինչպես կազմակերպության մյուս անդամները, այնպես էլ Հայաստանը իր տեսակետներն արտահայտեց այստեղ: Ինչպես արդեն ասացի, եթե բոլորս բարի կամք դրսեւորենք եւ դրանց հաղթահարման ուղղությամբ ջանք գործադրենք, ապա կնպաստենք տնտեսական համագործակցությանն ու ժողովուրդների բարությանը»:

Ինչպես երեւում է, պետքարտուղար Քլինթոնի երեւանյան շեշտադրումներն ու ՀՀ արտգործնախարար Նալբանդյանի հայտարարությունը հասել են հասցեատիրոջը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Հավասար պայմաններ տեղական եւ ներմուծվող օղիների համար

Կառավարությունը երեկ հաստատեց «Արտաքին տնտեսական գործունեության ադրանքային անվանացանկ» դասակարգիչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծման արտոնագրման կարգը, որի առնչությամբ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ, փաստորեն, ներքին արտադրողի եւ ներմուծողի համար լինելու է բարդ ընթացակարգով արտոնագիր: Դա նշանակում է, որ սահմանվելու են տեխնիկական չափանիշներ, եւ ներմուծողներն ու արտադրողները պետք է համապատասխանեն այդ չափանիշներին: Ստուգումն իրականացվելու է տարին մեկ անգամ եւ պարտադիր կերպով: Էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանն** ասաց. «Մենք այստեղ հավասար պայմաններ ենք ստեղծում, որովհետեւ այս պահին ներմուծումը պարզ ընթացակարգով է, իսկ արտադրությունը՝ բարդ: Ըստ էության ինչ-որ չափով պաշտպանում ենք տեղական արտադրությունը՝ ստեղծելով հավասար պայմաններ: Այս ընթացակարգով կուժեղանա նաեւ հսկողությունը, այդ թվում նաեւ սննդի անվտանգության տեսակետից: Միաժամանակ սա համապատասխանում է նաեւ մեր միջազգային պարտավորություններին, ըստ որոնց պետք է հավասար պայմաններ ապահովենք տեղական եւ օտարերկրյա ընկերությունների համար» Ա. Մ.

Նշանակում եւ հաստատում

Ռաֆիկ Գրիգորյանը կառավարության երեկվա որոշմամբ նշանակվեց Գեղարքունիքի մարզպետ: Մեկ այլ որոշմամբ հաստատվեց Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտորի պաշտոնում Գայանե Գասպարյանի ընտրության արդյունքը: Ա. Մ.

Սուիցիդ

1-ին էջից

Չի խանգարի հիշեցնել, որ 1986 թվականի խորհրդային հանրապետությունների վերաբերյալ վիճակագրությամբ Հայաստանում 100 հազար բնակչից ինքնասպան է եղել միջինացված ցուցանիշով 1,8-ը, ինքնասպանությունների մակարդակով 16 հանրապետություններից Հայաստանը նախավերջին տեղում է եղել, մինչդեռ Էստոնիայում, Լատվիայում, Լիտվայում եւ Ռուսաստանում շատ բարձր ցուցանիշներ են եղել եւ 100 հազար մարդուն ընկել է 27-ից 22 ինքնասպան: Վերջին քսան տարում Հայաստանում ինքնասպանությունների դինամիկան աճել է եւ օրական միջին հաշվով 1,5,-2 ինքնասպանություն է տեղի ունենում փաստորեն:

100 հազար բնակչին ընկնող ցուցանիշով՝ առաջատար են Երեւանը, Վայոց ձորը եւ Շիրակը, Շիրակում 100 հազար մարդուց մոտ 20-ը ինքնասպան է: Ըստ փորձագիտական չափանիշների՝ Եթե 100 հազար բնակչին մինչեւ 10 ինքնասպան է բաժին հասնում, ուրեմն հասարակությունը կոմֆորտային վիճակում է, եթե 10-ից 20 ինքնասպանություն է տեղի ունենում 100 հազ. բնակչի հաշվով, ուրեմն կա պրոբլեմ, իսկ 20-ից բարձր ճգնաժամային վիճակի մասին է վկայում: Ասենք, որ այս իմաստով թեեւ Հայաստանում ճգնաժամ չէ, բայց աճի դինամիկա կա, միտումն է մեծանում, ուրեմն եւ մտահոգվելու խնդիր կա: Մանավանդ որ, ըստ մասնագետների, մեզ մոտ ավելի միջին տարիքի ինքնասպաններն են շատ, ի տարբերություն միջազգային վիճակագրության, ըստ որի այլ երկրներում ավելի գերակշռում են դեռահաս եւ մեծահասակ ինքնասպանները: Ընդ որում հետաքրքրական է, որ բարեկեցիկ Շվեդիայում, Շվեյցարիայում 100 հազար մարդուն մինչեւ 42 ինքնասպանության շատ բարձր թվեր են բաժին ընկնում: Ընդհանրապես՝ աշխարհում տարեկան ինքնասպանություն է կատարում մոտ 1 մլն մարդ, ինքնասպանությունների փորձերի թիվը տասնյակ անգամ ավելի մեծ են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանխատեսումներով 2020 թ. 1, 53 մլն մարդ ինքնասպան կլինի, ինքնասպանյան փորձ անելու հակվածների թիվը տասնյակ անգամ ավելի մեծ կլինի: Ստացվում է, որ միջին հաշվով յուրաքանչյուր քսան րոպեն մեկ մարդ ինքնասպանություն կգործի, եւ յուրաքանչյուր 1-2 վայրկյանը մեկ սուիցիդալ փորձ կկատարվի:

Անկախ աշխարհի միտումներից՝ Հայաստանում առկա վիճակը ինքնասպանությունների աճի միտման տեսակետից իսկապես մտահոգող է, քանի որ մենք սակավաթիվ ազգ ենք, ու ամեն կյանքը մեզ համար կարեւոր է, դրա համար խիստ արդիական է դառնում ինքնասպանությունների պատճառների, կանխարգելման, լրատվական քաղաքականության եւ մասնագիտական մոտեցման խնդիրը, որոնց վերաբերյալ «**Ազգը**» զրուցել է հոգեբան **Կամո Վարդանյանի** հետ, որը նաեւ մեզ մատուցել է նյութում առկա տեղեկատվությունը: Հոգեբանի խիստ հետաքրքրական դիտարկումների մասին մեր հրապարակումը կներկայացնենք առաջիկայում:

Մոտենում է 2015 թ. ապրիլի 24-ը, եւ հայությունը պատրաստվում է նշելու Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցը: Պետությունը պատրաստվում է այս իրադարձությանը, մշակվում են միջոցառումների եւ գործողությունների ծրագրեր: Ավելի քան տասներկու տարի է, ինչ այս հարցը ճանաչվել է իբրեւ արտաքին քաղաքական գերակայություն: Հայաստանի իշխանությունները բազմաթիվ առիթներով հայտարարել են, որ միջազգային ասպարեզում պայքարելու են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացը շարունակելու ու իր տրամաբանական

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հրամայականը եւ մենք

ավարտին հասցնելու համար: Վերջին տարիների ընթացքում կարծես ձեւավորվեց այդ «ավարտ» հասկացության իմաստային բովանդակությունը: Դա այն է, որ գործընթացը կարող է ավարտված համարվել, երբ Հայոց ցեղասպանության փաստը ճանաչի Թուրքիայի Հանրապետությունը: Միաժամանակ վերջին տարիների քննարկումները հստակ ցույց են տվել, որ հայ հասարակության մեջ չկա միասնական ըմբռնում, թե ի՞նչ պետք անի Թուրքիան փաստը ճանաչելուց եւ ներողություն խնդրելուց բացի: Թուրք արդարամիտ մտավորական եւ հասարակական գործիչ Ռագըփ Զարաֆոլուն, վերջերս Երեւանում ՀՀ նախագահի մրցանակը ստանալիս, համարձակորեն հայտարարեց, որ, իր համոզմունքով, Թուրքիան պետք է հայերից ներողություն խնդրի եւ փոխհատուցում տա: Եթե դրանից առաջ էլի այլ թուրքեր Հայոց ցեղասպանության փաստը Թուրքիայի կողմից ճանաչելու անխուսափելիության մասին դատողություններ արել էին, ապա պարոն Զարաֆոլուն առաջիններից էր, որ բարձրաձայն խոսեց փոխհատուցման մասին: Ամեն տարի, ապրիլի 24-ին, դիտելով հեռուստաալիքները եւ լսելով ինչպես քաղաքական գործիչների, այնպես էլ շարքային քաղաքացիների դատողություններն ու մաղթանքները, բոլորս շատ լավ հասկանում ենք, որ հայության հավաքական տեսլականը Արեւմտյան Հայաստանի վերադմիավորումն Հայաստանի Հանրապետության հետ, եւ դա է ենթագիտակցական մակարդակով արդարության վերականգնման ակնկալիքը: Սակայն բանականությունը անմիջապես էլ ասում է, որ դա հեռու ապագայի տեսլական է, իսկ քաղաքական գործընթացներն այժմեական են եւ կարող են զարգանալ ինչպես նպաստավոր, այնպես էլ աննպաստ սցենարներով:

2007 թ. ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը քաղաքական խնդիրը ձեւակերպել է հետեւյալ կերպ. «Հետամուտ լինելով Հայոց ցեղասպանության համընդհանուր, մասնավորապես՝ Թուրքիայի կողմից ճանաչմանը եւ դատապարտմանը՝ Հայաստանն այն դիտարկում է ոչ միայն պատմական արդարության վերականգնման, այլեւ տարածաշրջանում փոխադարձ վստահության մթնոլորտի բարելավման եւ ապագայում նման ոճիրների կանխարգելման համատեքստում»: Դեռեւս 2005-ին ռազմավարությունը նախապատրաստող համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության արդյունքում ամբողջական համաձայնություն էր ձեռք բերվել, որ ճանաչման եւ դատապարտման գործընթացը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության երաշխիքներից մեկն է, որովհետեւ նպատակ է հետապնդում բացառելու այդ ողբերգության հնարավոր կրկնությունը: Ռազմավարության նախագծում, որը նախապատրաստել էր հանձնաժողովը, այդ մասին գրված էր հետեւյալը. «Հատուկ ուշադրության է արժանի Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի շուրջը ստեղծված իրավիճակը: ՀՀ-ն, համաձայն լինելով արեւմտահայության օրինական պահանջին՝ վերականգնել Օսմանյան կայսրության բնիկ հայ ժողովրդի եւ նրա սերունդների նկատմամբ պատմական արդարությունը, միեւնույն ժամանակ Եղեռնի ճանաչումը դիտում է Հայաստանի բնակչության նկատմամբ նոր ցեղասպանության հնարավորության համատեքստում, այսինքն՝ որպես ՀՀ բնակչության գոյության անվտանգության երաշխիքներից մեկը»:

Հարյուրամյակի տարելիցին ընդառաջ գծագրվում են որոշ քննարկվելիք թեմաների եւ բարձրացվելիք հարցերի տեսլականներ:

Ո՞րն է հայության կոնկրետ պահանջն այս հարցում

Բոլորը գիտեն, որ արդեն մոտ կես դար Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը Հայաստանի ու Սփյուռքի հայությանը համախմբող կարեւորագույն գաղափարն է: Այս գաղափարի առաջմղման գործում արձանագրվել են լրջագույն հաջողություններ, որոնց մասին նույնպես բոլորը գիտեն: Հայաստանի քաղաքական դաշտում բանավեճի թեմա դարձավ այն հարցը, թե ո՞վ է մեղավոր, որ վերջին տարիներին միջազգային ճանաչման ու դատապարտման հաղթարշավը չի ընթանում նույն արագ քայլերով, ինչ, ասենք, տասը տարի առաջ: Եվ արդյոք դրանից պե՞տք է քաղաքական հետեւություններ անել: Ֆրանսիական խորհրդարանում վերջերս անցած բուռն քննարկումները Հայոց ցեղասպանության փաստը ուրանալու համար քրեական պատասխանատվություն սահմանելու օրինագծի վերաբերյալ կարծես նախանշում էին մի նոր նշաձող, որին պետք է ձգտեր հայությունը: Այն է՝ իր ոչ միայն պատմաբարոյական, այլեւ իրավական-քաղաքական գնահատականով Հայոց ցեղասպանությունը հավասարեցնել հրեական Հոլոքոսթի հետ: Հարկ է հիշել նաեւ, որ օրինագծի տարալման փաստը ցավով ընդունած մարդկանցից ոմանք, այդ թվում՝ հարցը առաջ մղելու գործում անուրանալի ծառայություններ ունեցածները, հարցրին, արժե՞ր արդյոք պայքարել նման բանաձեւի համար, երբ ֆրանսիական խորհրդարանը 2000-ականների սկզբին Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչել ու դատապարտել էր: Սա ոչ այնքան բնիկ հայկական, որքան ֆրանսիական աշխարհայացքից բխող մի քննարկում էր, որից հայության օգուտն այն է, որ քննարկվի եւ ամբողջանա ազգային պահանջատիրությունը եւ սանա ոչ միայն ընդհանրապես, այլ նաեւ կոնկրետ մեր ժամանակի համար հնչեղություն ունեցող ու այլոց կողմից հասկանալի բանաձեւում:

1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու համար դաշնակիցների խորհրդով Հայաստանի Հանրապետությունը նախապատրաստեց հայ ժողովրդի պահանջներին վերաբերող փաստաթուղթ, որը խիստ ոչ ամբողջական էր եւ հիմնված էր Կովկասում ապաստան գտած հայ գաղթականների կորցրած գույքի տվյալների հիման վրա: Թե իրականում ի՞նչ ծավալ է կազմել այն վնասը, որ կրել են արեւմտահայերը Հայոց ցեղասպանության ժամանակ՝ ոչ ոք չի կարող ասել: Միամտորեն կարելի էր կարծել, որ այդ վնասների ամբողջական փաթեթը կարելի կլիներ գտնել օսմանյան արխիվներում, որովհետեւ հստակ հայտնի է, որ այդ գույքը բռնագրավվել է, այնուհետեւ վերաբաշխվել կամ վերավաճառվել, իսկ մի մասն էլ՝ տերերին ոչնչացնելուց հետո կողոպտվել է: Դեռ մեր անկախությանը նախորդող շրջանում Սփյուռքի բազմաթիվ կազմակերպություններ ու փորձագետներ ահազանգում էին, որ թուրքական այն ժամանակների իշխանությունների հրահանգով օսմանյան արխիվները «սանրվում ու մաքրվում» էին: Այնպես որ մոռանալ այդ հորդորները եւ ամբողջ հույսը դնել այդ արխիվներում պահվող տեղեկությունների վրա միամտություն կամ ինքնախաբեություն կլիներ: Բայց անհնար է, որ այդ արխիվները ամբողջությամբ ոչնչացված լինեին եւ, անշուշտ, այնտեղ ավելի անորոշ կամ միջնորդավորված տեղեկություններ պահպանվում են, եւ դրանք հետազոտելը վաս չէր լինի: Հայտնի է, որ մեր օրերի դյուրացումների պայմաններում թուրք հետազոտողներին էլ սկսել են հետաքրքրել մեր պետական արխիվների համապատասխան նյութերը, եւ սա մեր օրերի նորություններից է:

Փարիզում անցյալ տարի հրավիրվեց Արեւմտահայության երրորդ համագումարը, որը նախաձեռնեցին եւ անցկացրին արեւմտահայության ժառանգների մի քանի տասնյակ նվիրյալ ակտիվիստներ: Համագումարի նախաձեռնողներից մեկը, իմ ուսանողական ընկեր, ճանաչված պատմաբան Վահան Մելիքյանը 2010-ին մի շատ արժեքավոր աշխատություն հրատարակեց արեւմտահայության ինքնակազմակերպման անհրաժեշտության եւ փոխհատուցման ձեւակերպման խնդրի վերաբերյալ: Այդ համագումարի պատմական ծառայությունը կարող էր լինել այն վնասի չափի բացահայտումը, որ կրել էր արեւմտահայությունը Մեծ Եղեռնի ժամանակ: Մոսկվայից, Լոս Անջելեսից եւ Բեյրութից տեղեկություններ են հասնում, որ այլ նախաձեռնող խմբեր եւ նույնիսկ անհատներ քայլեր են անում պահանջատիրության բովանդակությունը մերօրյա պահանջներին համապատասխան ձեւակերպելու ուղղությամբ: Դարձել է անհրաժեշտ, որ հայ հասարակության մեջ մի լուրջ քննարկում սկսվի, թե ի՞նչ ենք մենք հասկանում «փոխհատուցում» ասելով: Որովհետեւ, օրինակ՝ «Նյու Յորք լայֆ ինշուրընս» ընկերությունը մի խորհրդանշական փոխհատուցում տվեց իր կյանքը այդտեղ ապահովագրած Օսմանյան կայսրության հայ քաղաքացիների երեք հազար իրավահաջորդներին եւ արդարությունը վերականգնված համարեց: Իսկ չի՞ կարող ստացվել այնպես, որ Թուրքիայի ներսում ընթացող բուռն գործընթացների արդյունքում, փոխհատուցում տալու գաղափարը հասունանա ավելի շուտ, քան կձեւակերպի իր ու աշխարհի համար հայությունը՝ լինեն արեւմտահայեր, թե նախկին ռուսահայեր: Ցավով եմ հիշում ապրիլի 24-յան վերջին հեռուստաբանավեճը, երբ հավաքված մի քանի տասնյակ քաղաքական գործիչները խոսում էին ամեն ինչի մասին, բացի այն պահանջից, թե ի՞նչ են հասկանում «պատմական արդարության վերականգնում» ասելով: Այդ հաղորդման ամբողջ ընթացքում ինձ չէր լքում այն միտքը, թե ի՞նչ են այժմ մտածում թուրքերն ու ադրբեջանցիները մեզ լսելով: Պոլսի Թափիմ հրապարակում ապրիլի 24-ին հավաքված էին մի քանի հազար հայեր ու նաեւ թուրքեր, որոնք ոգեկոչում էին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Խորհրդարանական ընտրությունների օրերին Եւրոպայում գտնվող թուրք լրագրողների միանգամից երկու խումբ ուզում էր հասկանալ, թե ինչո՞ւ են Հայաստանի հայերը տեսնում հայ-թուրքական հարաբերությունների բարելավման հեռանկարը: Նրանցից ոմանք շատ հանգիստ եւ նույնիսկ համարձակ բարձրաձայնում էին, որ այսօրվա թուրքական հասարակության մեջ բարձրաձայն եւ ազատ քննարկվում է այն հարցը, թե ի՞նչ է եղել 1915 թվականին: Շատ պարզ է, որ այդ «ազատ քննարկումներից» մինչեւ «պատմական արդարության վերականգնում», մինչեւ պատմական հիշողության հետ հաշտեցում եւ մինչեւ մեղքի ընդունում դեռ շատ երկար ճանապարհ կա անցնելու: Այդ ճանապարհի արդեն արված քայլերը հարց են բարձրացնում. ճիշտ ուղին արդյոք երկխոսությո՞ւնն է թուրքերի հետ, արդյոք քննարկումնե՞րն ու բանավեճե՞րն են, թե ճիշտը բոյկոտն է ու լռությունը, եւ սպասելը մինչեւ Թուրքիան մի լավ օր «էլ ավելի ժողովրդավարանա»:

Հայության անվտանգության եւս մեկ երաշխիք

Որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի առաջմղումը պայմանավորված է մեր ազգային անվտանգության երաշխիքն ապահովելու ցանկությամբ, հասկանալի եւ ընդունելի է: Բայց պետք է հստակ ասվի նաեւ, որ հարցի արծարծումը միջազգային ասպարեզում ոչ միայն Հայաստանի ժողովրդի, այլեւ հայկական սփյուռքի ապահովության երաշխիք է: Ճիշտ է, հայերը աշխարհի բոլոր ծեգերում համայնքներ են հիմնել անհիշելի ժամանակներից, բայց կազմակերպված հայկական Սփյուռքը Հայոց Մեծ Եղեռնի հետեւանքն է: Զարախոս ընդդիմախոսներն ասում են, որ Հայաստանի անկախությունից հետո երկու սփյուռք կա. հին սփյուռք՝ ցեղասպանության զոհ արեւմտահայեր, եւ նոր սփյուռք՝ Հայաստանից ու նախկին ԽՍՀՄ-ից արտագաղթած էմիգրանտներ: Սա չարախոսություն է ոչ միայն այն իմաստով, որ այս երկուսին փորձում են հակադրել միմյանց, ինչպես միշտ փորձել են հայաստանցիներին հակադրել սփյուռքահայերին: Բայց նույնիսկ այդ չարախոս ընդդիմախոսները, ովքեր ընդունում են, որ Սփյուռքը երկու շերտ ունի, պետք է ընդունեն, որ եթե հայերը հանգիստ ու նորմալ ապրեին իրենց պատմական հայրենիքում, այդչափ երբեք չէին ցրվի աշխարհով մեկ: Ուրեմն, հետեւողականորեն առաջ մղելով Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման դաշը, Սփյուռքի հայ համայնքները պայքարում են իրենց կազմակերպված գոյության իրավունքի համար: Հենց դրա համար էլ հակառակորդները երբեք չեն զլանա օգտագործել այն կեղծ փաստարկները, թե երիտասարդ սերունդը այդչափ տոգորված չէ այս խնդրով, որքան միջին եւ ավագ սերնդի ներկայացուցիչները: Այս դատողությունների նպատակը Սփյուռքի պատանիների եւ երիտասարդների օտարումն է համահայկական գլխավոր գաղափարից: Մի բան, որ այն, ինչպես տեսանք, մեր օրերի միջազգային օրենքի եւ մարդկային բարոյականության ու իրավունքների տեսանկյունից նույնիսկ մեզանում պարզ ու հստակ ձեւակերպված չէ: Հստակ այնքան, որ երբեւէ որեւէ մեկի մտքով չանցնի այս անվիճելի իրողության մանրամասների մեջ նենգ խաղեր տալը:

Նոր քայլեր ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ

Վերջին մի քանի տարիներին որեւէ նոր պետություն Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես չի ճանաչել եւ չի դատապարտել: Բայց պետք է ընդունել, որ Հայաստանի անկախության շրջանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը այնպիսի անկասելի հաջողություններ է արձանագրել, որ մեր առաջատար ցեղասպանագետ եւ արեւելագետ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը հիմնավորված գտնում է, որ տեղին է Հայոց ցեղասպանության մասին խոսելը իբրեւ ճանաչված ցեղասպանության:

Վերջին ամիսների նորությունն այն է, որ Իսրայելի կառավարությունը կանաչ լույս է վառել այս հարցի քննարկումներ սկսելու համար: Հասկանալի է նաեւ, որ դա թուրք-իսրայելական հարաբերություններում ի հայտ եկած տարաձայնությունների արդյունք է: Սփյուռքահայ կազմակերպությունները շատ լավ գիտեն, որ մեր հարցի հաջողությունն ապահովելու համար իրական կառույցների աջակցությունն ապահովելը շատ կարեւոր է: Ի՞նչ կպատահի, եթե Հայաստան հրավիրենք Իսրայելում հարցը արծարծող հասարակական ու քաղաքական գործիչներին: Ինչո՞ւ Հայաստանին չի կարելի բարեկամական եւ եղբայրական հարաբերություններ ունենալ Իրանի ու Արաբական աշխարհի երկրների հետ եւ միաժամանակ փորձել նորմալ, գործնական հարաբերություններ ունենալ Իսրայելի հետ: Ինչո՞ւ ուրիշներին կարելի է, իսկ մեզ՝ ոչ: Հայոց ցեղասպանության եւ իրական Հոլոքոսթի միջեւ կարելի է նմանություններ եւ տարբերություններ գտնել: Սա գիտագործնական հետաքրքրություն ներկայացնող խնդիր է: Բայց քաղաքական քայլերը պետք է բացառապես պայմանավորված լինեն գերակա շահերով եւ իրողություններով: Չեմ կարող չիմանալ, որ վերջին հինգ տարում միայն ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովում միաձայն ընդունվել են երկու բանաձեւեր, որոնք դատապարտում են հրեայացությունը եւ վերսին ընդգծում են Հոլոքոսթի անժխտելի փաստը:

Շատ հեշտ է լռեցնելը, դժվար չէ նաեւ լռելը: Կարելի է սպասել եւ չգործելը հիմնավորել տեսականորեն: Բայց այսպես կարելի է նաեւ եղածը կամաց-կամաց կորցնել: Երկխոսության եւ համագործակցության վրա հիմնված գլոբալ անվտանգության փափուկ ապահովման մերօրյա փնտրտուքի մեջ մեր խնդիրը Հայաստանի եւ հայերի անվտանգությունը ապահովելն է բոլոր թույլատրելի միջոցներով:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան,
բանասիրական
գիտությունների թեկնածու

Ինչո՞ւ են Ադրբեջանում վերհիշել կեսդարյա վաղեմության դեպքը

Այդ մասին հայկական մամուլում բազմաթիվ հրապարակումներ են եղել: Մանրամասնություններին չենք անդրադառնա: Խոսքը նախկին ԼՂԻՄ Մարտունիի շրջանի Կուրոպատկինո գյուղում տեղի ունեցած՝ 8-ամյա հայ երեխայի գազանաբարո սպանության եւ դրան հաջորդած միջադեպի մասին է: Ինչո՞ւ էին ադրբեջանական իշխանությունները Գեղագույն դատարանի արտագնա նիստ անցկացրել Ստեփանակերտում: Այն էլ՝ ամառային կինոթատրոնի շենքում: Ինչո՞ւ էին հնարավորություն ստեղծել, որ դատավարության շուրջը հնարավորինս շատ կրքեր բորբոքվեին:

Երեխայի սպանությունը բացահայտվել էր, մեղադրյալները հայտնի էին: Իշխանությունները հնարավորություն ունեին դատավարությունը անցկացնելու փակ, հանցագործներին արժանի պատիժ տալ եւ մթնոլորտը լիցքաթափել: Նրանք, սակայն, ընտրել էին ամենավտանգավոր տարբերակը՝ «դատավարություն» բեմադրել Ստեփանակերտի կենտրոնում եւ... հրապարակայնորեն նվաստացնել ոչ միայն երեխայի ծնողներին, հարազատներին, այլեւ ողջ արցախահայությանը: Քանի որ մանկահասակ տղայի դահճին, դիակը բորենիաբար պղծողին, ըստ դատավճռի, սահմանվել էր 15 տարվա ազատազրկման պատիժ: Եվ մինչեւ հոգու խորքը նվաստացած մարդիկ, այո, ինքնադատաստան էին արել՝ հրկիզել էին բանտային մեքենան:

Այդ օրվանից գրեթե կես դար է անցել: Եվ հանկարծ կիսապաշտոնական day.az-ը նողկալի ցինիզմով պատմում է, որ «մեղադրյալներից երկուսը դատապարտվել են պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության, երրորդը՝ 15 տարվա ազատազրկման, բայց հայ ահաբեկիչները գրավել են բանտային մեքենան, սպանել նրանց, գանգամաշկել, ապա եւ դիակները հրկիզել»:

Ինչո՞ւ էին Ադրբեջանի իշխանությունները դիմել բացահայտ սադրանքի: Նախ այս հարցին պատասխանենք: Ժամանակը հուզումնալից էր: ԼՂԻՄ-ից Մոսկվա էր հղվել «13»-ի նամակը: Կազմակերպվել էր նաեւ ստորագրահավաք, եւ ավելի քան 50 000 արցախցի միացել էր ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պահանջին: Իր տեսակի մեջ դա յուրօրինակ հանրաքվե էր: 8-ամյա երեխայի դաժան սպանությունը «զգուշացնում» էր արցախահայությանը: Իսկ Ստեփանակերտում հրահրված սադրանքը՝ իրավիճակը սրելու, ԼՂԻՄ հիմնախնդիրը նենգափոխելու նպատակով իրականացված հատուկ գործողություն, որի անմիջական «կուրատորը» Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահի առաջին տեղակալ Հեյդար Ալիեւն էր:

Սադրանքին հետեւել էին զանգվածային ձերբակալություններ եւ բռնություններ: Ինքնադատաստանի ենթարկվածների հուղարկավորությանը (բառի համար՝ ներողություն) ներկա էր գտնվել եւ նրանց «սուրբ նահատակ» էր անվանել Ադրբեջանի կառավարության նախագահը: Ինքնավար մարզը ամիսներ շարունակ ենթարկվել էր դաժան շրջափակման: Ձերբակալված հայերից երկուսը դատապարտվել էին գնդակահարության, եւ նրանց հանդեպ դատավճիռը ի կատար էր ածվել: Տասնյակ ուրիշներ երկարաժամկետ ազատազրկման էին դատապարտվել:

Բայց ինչ կարիք կար, որ այդ ամենը հիշեցվեր: Անցել է, կրկնենք, շուրջ կես դար:

Պարզ է, թե ինչու են Ադրբեջանում վերհիշել այդ ողբերգական իրադարձությունները: Day.az-ի հրապարակումը համեմված է... «դեռեւս 1940-ական թվականների վերջերին արտասահմանից Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ, նույնիսկ՝ Բաքու եւ Կիրովաբադ անցած «դաշնակցական ահաբեկիչների» կողմից հրահրված ազգայնական շարժման» մասին ցնորաբանությամբ: Պատկերացնել, որ Ստալինի օրոք Հայ հեղափոխական դաշնակցությունը կարող էր հայրենադարձ հայերի հետ ԽՍՀՄ «ուղարկել ահաբեկիչների», երեւակայությունից վեր մի բան է:

Հերթական անգամ ապաշնորհ փորձ է արվում նենգափոխելու արցախահայության ընդվզման պատճառները: Պատմությունը, բարեբախտաբար, մեզ համար պահել է «13»-ի նամակի բնագիրը: Այնտեղ շարադրված են ՀԽՍՀ հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման պահանջի պատմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգեւոր-մշակութային հիմնավորումները: Եվ այնքան համոզիչ, որ ԽՍՀՄ իշխանությունները ստիպված էին հանձնարարել, որ Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարությունը քննարկի խնդիրը եւ ներկայացնի առաջարկություններ:

Այլ բան է, որ Մոսկվան հետեւողական չգտնվեց: Բայց դա չի նշանակում, թե Լեռնային Ղարաբաղի խնդիրը «մշտապես եղել է Ադրբեջանի հանդեպ Հայաստանի տարածքային հավակնություն», ինչպես փարիսեցիաբար գրում է day.az-ը՝ «ներկան շաղկապելով անցյալին»: Ենթատեքստը հասկանալի է: Բայց նույնիսկ այդ դեպքում չէ՞ որ ամեն ինչ 1966-ին սկսվել է 8-ամյա հայ երեխայի սպանությունից: Այն էլ՝ իրականացված դպրոցի տնօրենի՝ ի պաշտոնե «մտավորականի», «ազգի խիղճը ներկայացնողի» կողմից:

Արժե՞ փորփրել այնքյալը, եթե այն բացահայտում է, որ դպրոցի տնօրենը նենգամտորեն խաբել, խաղից կտրել, խաղողայգու խորքն է տարել 8-ամյա տղային, սպանել, դիակը հոշոտել: Մի՞թե այսօր այդ ամենը պատմվում է իբրեւ բոլոր ադրբեջանցիների համար «ուսանելի դաս»: Իսկ եթե «ոչ», ապա ինչո՞ւ է պատմվում: Նողկալի է: Անմարդկային: Հակաբնական եւ հատկապես հակաբանական՝ որ 21-րդ դարի «հանդուրժողական, բազմամշակութային» երկրի գրեթե պաշտոնական լրատվամիջոցը մի մանկասպան տականքի փորձում է դասել «անմեղ նահատակների» շարքին:

Մի՞թե Ադրբեջանը արժանապատիվ հերոսության եւ մարդկայնության օրինակ չունի, որ «պանծացնում է» նմաններին: Ըստ երեւույթին՝ չունի: Քանի որ նոր ժամանակներում էլ «հերոսացնում է» ծառայակից սպային գիշերը կացնահարած Ռամիլ Սաֆարովին եւ դիվերսանտ Մուբարիզ Իբրահիմովին, որի դիակը ամսից ավելի անթաղ ընկած էր ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումներից մեկի առաջնապահ խրամատում:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ընակչությունը թերասնվում է, իսկ սնունդը փչանում է

Հնդկաստանում ամեն տարի թարմ բերքի մեկ երրորդը փչանում ու անտեղի կորչում է, պատճառը սննդի պահպանման ոչ լիարժեք համակարգն է, ինչն էլ առաջ է բերում սննդամթերքի կորստի լուրջ խնդիր:

Մումբայ (նախկին անվանումը Բոմբեյ) քաղաքի Բայլաի շուկայի խանութատերերն ասում են, որ միրգն ու բանջարեղենը փչանում են մինչեւ մատակարարման շղթայով ֆերմաներից հասնում են սպառողների տները:

Խանութատերերից Մոհամմադ Քուրեշին ընգծում է. «Ապրանքի մոտավորապես կեսը փչանում է մինչեւ խանութ հասնելը, հատկապես մուսսոնների սեզոնին, երբ մնում է անձրեւի տակ»:

BBC հեռուստաընկերության փոխանցմամբ՝ սննդամթերքի անհամապատասխան պահեստավորման ու անկազմակերպ տարաբաշխման հետեւանքն է, որ Հնդկաստանում բանջարեղենի, մրգերի ու հացաբույսերի բերքի մի մեծ քանակություն փչանում է, մինչեւ հասնում է վերջնական սպառողին:

Թեեւ Հնդկաստանի կառավարությունն ընդունում է եւ համաձայնում, որ կա անբավարարություն

սննդամթերքը պահեստավորելու համար անհրաժեշտ տարածքների, սակայն տարիներ շարունակ խնդիրը մնում է չլուծված: Բացի դրանից՝ սննդամթերքի գները երկրում արագ բարձրանում են, մինչդեռ Հնդկաստանը սննդի երկրորդ խոշոր արտադրողն է ամբողջ աշխարհում:

Հանձնախումբը, որը ստեղծվել է լուծելու հացահատիկի հավելուրդի կորստի հարցը, հատկապես ցորենի առաս բերքից հետո, առաջարկել է արտահանել հացահատիկի ավելցուկը սուբսիդավորված տոկոսադրույքներով:

Սակայն Գեղագույն դատարանի սննդի գծով խորհրդական Բիրաջ Պաթնեյքն ասում է՝ իրենց համար նախընտրելի է հացաբույսերի բերքը տարաբաշխել հենց իրենց երկրում, որտեղ ամեն տարի բազմաթիվ մարդիկ մահանում են սովից:

«Հնդկաստանում երեխաների գրեթե կեսը թերասնվում է: Նման պայմաններում, երբ շատ մարդիկ սովամահ են լինում, հացաբույսերը փչացնելը պարզապես անթույլատրելի է, եւ անփույթ այս վերաբերմունքը սննդի հանդեպ գրեթե զանցառություն է», ավելացնում է Բիրաջ Պաթնեյքը:

Քննադատները կարծում են, որ խնդիրը լուծելու համար չի դրսեւորվում քաղաքական բավարար կամք, իսկ փորձագետներն ասում են՝ սննդի անտեղի կորուստը կասեցնելու համար լուրջ ներդրումներ են պահանջվում: Սակայն խնդիրը չի լուծվում, ու բնակչության մի հոծ զանգված շարունակում է թերասնվել, երբ իր բնակչությանը սնելու համար բավարար բերք Հնդկաստանը ստանում է:

ԹԵՂԱՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊՐԱՀԱ

Չեխ նախարարը պատասխանակ արվեց ագահության պատճառով

Չեխիայի վարչապետ Պետր Նեչասը պատասխանակ է արել արդարադատության նախարար Իրժի Պոսպիշիլին: ՀՌՀ գործակալությունը հաղորդում է, որ այդ որոշման պատասխանական պատճառը նախարարի չափազանցված ֆինանսական պահանջներն էին իր գերատեսչության համար:

Պատասխանակությունից առաջ Պոսպիշիլը վարչապետից պահանջել էր մի քանի հարյուր միլիոն կրոնով մեծացնել արդարադատության նախարարության բյուջեն: Ռոյթեր գործակալության տվյալներով, խոսքը 1 մլրդ կրոնի (48 մլն դոլարի) մասին է: Նախարարի դիմումը ժամանակի առումով համընկավ պետական ծախսերի կրճատման արավի հետ:

Մեկնաբանելով իր ենթակայի պատասխանակությունը, Նեչասը նրա պահանջները համարել է անընդունելի: Վարչապետը նաեւ ընդգծել է, որ նման վարքագիծը «բարոյալքիչ ազդեցություն ունեցավ ամբողջ կառավարության վրա»:

Չեխական մամուլում ենթադրություններ են արվում, թե անհնազանդությունը լոկ ձեւական պատրվակ է եղել արդարադատության նախարարի համար: «The Praha Post» թերթի տվյալներով, Պոսպիշիլի հրաժարականին սպասում էին արդեն մի քանի ամիս: Պատճառը արդարադատության նախարարի արավն է Պրահայի դատախազ Վլատիմիլ Ռամպուլայի դեմ:

Թերթը գրում է, որ 2011-ին Ռամպուլան պատասխանակ էր արվել կաշառակերության խոշոր սկանդալների հետաքննության թերությունների պատճառով: 2012-ին դատախազին վերականգնել էին պատասխանում, բայց արդարադատության նախարարի առարկությունից հետո կրկին հեռացրել էին: Հունիսի 17-ին պետական դատախազ Պավել Զեմանը հայտարարել էր, որ Ռամպուլայի զբաղեցրած դատախազական պատասխանը պետք է վերացվի:

Պոսպիշիլը պատասխանատվությունից հետո մտադիր է սահմանափակել իր քաղաքական գործունեությունը եւ աշխատել որպես թանգարանի խորհրդատու:

Չեռնոգորիան այսօրվանից կբանակցի ԵՄ անդամակցության համար

Չեռնոգորիան հունիսի 29-ից իրավասու է Եվրոմիության հետ սկսելու անդամակցության բանակցություններ, միայն թե պարտավոր է լրջորեն պայքարել կազմակերպված հանցագործությունների, կաշառակերության դեմ, ինչպես նաեւ հանուն դատական համակարգի անկախության: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

ԵՄ ղեկավարները Լյուքսեմբուրգում համաձայնություն հանձնարարական են ընդունել հունիսի 28-ի հանդիպման ժամանակ ԵՄ 27 երկրների արտգործնախարարները հավանություն են տվել Եվրոհանձնաժողովի գնահատականին, ըստ որի Չեռնոգորիան բավարարում է անդամակցության բանակցությունները սկսելու համար պահանջվող չափանիշները:

France24 կայքէջը հիշեցնում է, որ 2010-ի դեկտեմբերին Չեռնոգորիան ստացավ ԵՄ անդամության թեկնածուի պատասխանական կարգավիճակ: Նույնպիսի կարգավիճակ ունեն Եվրոմիության հետ բանակցությունները շարունակող Թուրքիան եւ Իսլանդիան:

Անդամակցության բանակցությունները կարող են տեւել մի քանի տարի: Դրանց հաջող ավարտի դեպքում Չեռնոգորիան ԵՄ-ում կդառնա նախկին հարավսլավական 3-րդ հանրապետությունը: Սլովենիան ԵՄ անդամ է 2004-ից, իսկ Խորվաթիան ԵՄ 28-րդ անդամը կդառնա 2013-ի հուլիսին:

Թանքաուին մնում է Եգիպտոսի պատշտանության նախարար

Եգիպտոսի զինված ուժերի Բարձրագույն խորհրդի ղեկավար, մարշալ Հուսեյն Թանքաուին պատշտանության նախարարի պաշտոնում կմնա նախագահ Մուհամմեդ Մուրսիի նոր կառավարությունում: Թանքաուիի նշանակման մասին եգիպտական CBC հեռուստալիքին տված հարցազրույցում ասել է գեներալ-մայոր Մուհամմեդ Ասարը:

76-ամյա Թանքաուին նախագահ Հոսնի Մուբարաքի պատշտանության նախարարն էր 1991 թվականից: 2011-ին Մուբարաքի տապալումից հետո Թանքաուին դարձավ պետության փաստական ղեկավարը: Սպասվում է, որ նախագահ Մուրսիի օրոք նա կշարունակի էական ազդեցություն գործել երկրի քաղաքականության վրա:

Հունիսի կեսերին Բարձրագույն խորհուրդը Սահմանադրական դատարանի վճռի համաձայն արձակեց խորհրդարանը, որտեղ մեծամասնություն էին կազմում իսլամիստները: Բարձրագույն խորհուրդը ավելի հեռուն գնաց, սանձնելով օրենսդրական պարտականություններ, որոնք կատարելու է մինչեւ խորհրդարանական նոր ընտրությունների անցկացումը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Վարդան Ուզունյանը 30 նկար նվիրաբերեց Լոնդոնի ԹՄՄ-ին

Ինչպես հաղորդել էինք արդեն, Լոնդոնի Թեֆեյան մշակութային միությունը (կազմակերպություն՝ հարակից Լոնդոնի Թեֆեյան Թրաուս բարեգործական կազմակերպությանը) վերածնվեց եւ վերակազմավորվեց՝ շարունակելու ԹՄՄ-ի առաքելությունն ու գործունեությունը՝ ի նպաստ հայ մշակույթի եւ ամրապնդելու աշխարհասփյուռ հայ համայնքների եւ Հայաստանի միջեւ կապերը:

Հայ ժամանակակից նկարիչների աշխատանքների ցուցահանդեսը առաջին խոշոր մշակութային միջոցառումն էր՝ կազմակերպված ԼԹՄՄ կողմից իր վերածննդից հետո: Երկաբաթյա ցուցահանդեսը, որը տեւեց մայիսի 28-ից մինչեւ հունիսի 8-ը, անցկացվեց Լոնդոնի Լեհական մշակութային եւ հասարակական կենտրոնում: Ցուցադրված էին հայ ժամանակակից նկարիչների 45 աշխատանք. հեղինակներն էին՝ Արմեն Ակնունի, Ռուբեն Մանուկյան, Սամվել Մարության, Սլավիկ Պարոնյան, Լուսյա Սամվելյան, Սեյրան Խաթլամաջյան, Արմեն Խոջոյան, Հրանտ Թադեւոսյան, Խաչիկ Հարությունյան, Սեդա Բեֆարյան, Ռուբեն Արուչյան, Վիլիկ Զաքարյան, Վրեժ Թամազյան, Անդրանիկ Կիլիկյան, Աշոտ Թադեւոսյան, Գեւորգ Զավրուշյան, Բագրատ Գրիգորյան, Համբարձում Բաղդասարյան, Ֆելիքս Հակոբյան, Վոլոդյա Մաթեւոսյան, Արտյոմ Թովմասյան, Արմեն Գրիգորյան:

Ցուցահանդեսի կազմակերպման հարցում մեծ ավանդ ունեցավ Լոնդոնի ԹՄՄ նախագահ, Հայաստանի «Թեֆեյան Կենտրոն» հիմնադրամի նախագահ Վարդան Ուզունյանը, որն իր սեփական հավաքածուից նվիրաբերեց ԹՄՄ-ին երեսուն աշխատանք: Ցուցահանդես-վաճառքից ստացված ողջ հասույթը կծառայի ԼԹՄՄ հետագա գործունեության զարգացմանը եւ նորանոր մշակութային ծրագրերի իրականացմանը:

Ցուցահանդեսն անցկացվեց Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի եւ Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպան տիկ. Կարինե Ղազինյանի հովանու ներքո:

Ցուցահանդեսի պաշտոնական բացումը, որին ներկա էին ավելի քան 150 արվեստասերներ, տեղի ունեցավ մայիսի 27-ին: Բացման եւ ողջույնի խոսքով հանդես եկավ Վ. Ուզունյանը, հանգամանորեն ներկայացնելով մշակութային միջոցառումը, որն առաջինն էր վերջին 15 տարիների ընթացքում:

Պրն. Ուզունյանը նաեւ երախտիքի խոսք հայտնեց բոլոր այն նվիրյալներին, որոնք մեծապես աջակցեցին ցուցահանդեսի կազմակերպմանը, մասնավորապես ԼԹՄՄ արվեստագետների խմբին՝ տիկ. Նաիրի Սահակյան (պատկերասրահների փորձառու ղեկավար), պրն. Էդմոնդ Այվազյան (հայ ճանաչված նկարիչ) պրն. Ներսես Երիցյան (ճարտարապետ, արվեստագետ), պրն. Նաիրի Աֆրիկյան (երիտասարդ նկարիչ Հայաստանից, ներկայումս աշխատում է ՄԲ-ում, ավարտել է Սուրբ Մարտինի անվ. արվեստի եւ դիզայնի քոլեջը):

Վարդան Ուզունյանը շնորհակալություն հայտնեց նաեւ ԹՄՄ խորհրդի անդամներ տիկ. Ռոզեթ Ուզունյանին, տիկ. Սոսի Երիցյանին, Կարեն եւ Սեւակ Արեյաններին իրենց նվիրումի եւ մեծածավալ աշխատանքի համար, ինչի շնորհիվ ցուցահանդեսն իրականություն դարձավ:

Բացման արարողությունը շարունակեց Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը, այնուհետեւ՝ դեսպան Կարինե Ղազինյանը: Երկուսն էլ հանդես եկան շնորհավորական ուղերձով՝ հատկանշելով ԹՄՄ բեղմնավոր գործունեությունը եւ նվիրումը հայ ժողովրդին: Նրանք կարեւորեցին կազմակերպության դերը ազգի հոգեւոր եւ մշակութային կյանքում, ինչպես նաեւ հայ-բրիտանական կապերի ամրապնդման հարցում:

Այս մշակութային միջոցառումը բարեգործական նախագիծ էր, որը մեծ հաջողությամբ պսակվեց, քանզի երկու շաբաթների ընթացքում արվեստասերների մեծ հոսք էր նկատվում Լոնդոնի Լեհական մշակութային եւ հասարակական կենտրոնում, իսկ վաճառված նկարներից ստացված հասույթը կուտակային ֆոնդ կազմեց ԼԹՄՄ հետագա ծրագրերի իրականացման համար:

ՄԵԳԱ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Մկրտիչ Սարգսյանի հիշատակին

«Կյանքն իր ամբողջության մեջ մեծ է,- գրում է **Հովհաննես Թումանյանը**,- շատ է մեծ: Կյանքը-տիեզերական կյանքն է, եւ մարդու կյանքի ամբողջ վեհությունն ու խաղցությունն էլ հենց էն է, որ իր շրջապատի միջոցով ապրի էն մեծ կյանքով»: Եվ իսկապես, առօրյա խառնիճաղանջ լրահոսում հաճախ են մոռանում «մեծ կյանքի» մասին, փիլիսոփայորեն ընբռնելու, իմաստավորելու մեր տեսածն ու լսածը, նրա ուղեծրում տեսնել ու մեր ապրած ժամանակի, մեր օրերի վայրիվերումները, ձեռքբերումներն ու հուսախաբությունները, որ երբեմն մեզ համար կենաց ու մահվան իմաստ են ստանում, դառնում հեղաշրջումներ ու իշխանափոխություններ, հասարակարգերի փլուզում ու նորի հաստատում, մինչդեռ ժամանակի «անտարբեր» ընթացքի մեջ դրանք արձանագրվում են որպես «ծանոթ ներկայացման» հերթական դրվագներ:

Այսպիսի մտորումներ է առաջացնում Մկրտիչ Սարգսյանի «Ի՞նչ կլիներ կյանքում...» բանաստեղծությունը, որը ներկայացնում ենք ընթերցողին, հեղինակի մահվան 10-րդ տարելիցի այս օրերին:

...

Ի՞նչ կլիներ կյանքում, եթե մի օր հանկարծ
Ոչխարը գայլ դառնար, գայլը դառնար ոչխար,
Նշխարը թույն դառնար եւ թույնը՝ սուրբ նշխար,
Թե՝ ագռավը սոխակ, սոխակն ագռավ դառնար,
Ցավը վսեմ հաճույք, հաճույքը ցավ դառնար,
Ամեն սուտ ու փչոց՝ ճշմարտություն հաստված,
Աստված՝ չար սատանա եւ սատանան՝ Աստված,
Եվ հիվանդը՝ բժիշկ, բժիշկն հիվանդ դառնար,
Բանտը՝ ազատ օջախ, աշխարհը բանտ դառնար,
Որ սողունը թռչեր եւ թռչունը սողար,
Արեգակը մթներ, մթությունը շողար...
Ի՞նչ կլիներ կյանքում, եթե այսպես լիներ...
Տուժողների աչքին այն կթվար վախճան,
Շահողների աչքին՝ կյանքի սկիզբ մի նոր,
Գեղեցկուհու համար՝ սիրային նոր արկած,
Զորավարի համար՝ պատերազմի առիթ,
Խելագարի համար՝ նոր ռեժիմ օրվա,
Դերասանի համար՝ դերաբաշխում սխալ,
Իսկ խաղաքաղաքացուն՝ հեղաշրջում ազնիվ,
Եվ դիվանագետին՝ նոր դիմակի պատվեր,
Բանաստեղծի համար՝ աստվածային խռովք...
Իսկ աշխարհի համար՝
Ծանոթ ներկայացման մեկնաբանում մի նոր...

Ամերիկացի հայտնի ջազ դաշնակահար Ուրի Քեյնը եղավ նաեւ «Մալխաս» ակումբում

Ջազային երաժշտությունը Հայաստանում մոտ ութ տասնամյակ առաջ սկսեց մուտք գործել ու դառնալ շատ սիրված: Ջազի հայրենիքը, ինչպես ընդունված է, համարվում է ԱՄՆ-ն: Եվ ահա Կամերային երաժշտության ազգային կենտրոնի եւ ՀՊԿՆ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյանի հրավերով Երեւանում է ամերիկացի դասական ջազի աշխարհահռչակ դաշնակահար **Ուրի Քեյնը**: Նախորդ օրը ճանաչված ջազմենը Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տվեց մեկ համերգ ու արժանացավ երկարատեւ ծափերի ու հիացական խոսքերի: Ուրի Քեյնը երաժշտական 22 ալբոմների հեղինակ է, նաեւ 2009-ի «Գրեմմի» մրցանակի հավակնորդ: Երեւանյան անդրանիկ համերգի ընթացքում Քեյնը առաջին անգամ կատարեց Կոմիտասի ստեղծագործությունները: Նա ոչ միայն ժամանակակից ջազային

փառատոների ֆավորիտներից մեկն է, այլ նաեւ աշխարհում դասական երաժշտության՝ Վագների, Բախի, Բեթհովենի ստեղծագործությունների իմպրովիզների լավագույն համադրողը:

Համերգից հետո «**Ազգի**» հարցին, թե ինչ՞ շատ էր արդյոք Կոմիտաս մեկնաբանելը, Ուրի Քեյնն ասաց. «Իմ կարծիքով յուրաքանչյուր երաժիշտ-կատարող ինքն է որոշում, թե ինչպես մոտենալ եւ մեկնաբանել երաժշտաշխարհում իրենց տեղն ու դերն ունեցող մեծերին: Կոմիտասի դեպքում ես շատ կարեւորում եմ ճիշտ կառուցվածքը: Իսկ Կոմիտասի ստեղծագործությունները շատ լրջորեն ու մանրակրկիտ ուսումնասիրել եմ, թե ինչը եւ որ մասը կարելի է իմպրովիզ անել, տասնյակ անգամ փորձել, փոխել, մինչեւ որ ստացա այն, ինչը այսօր ձեզ մատուցեցի: Շնորհակալ եմ, որ այն ձեր խստապահանջ հանդիսատեսի կողմից ընդունվեց ջերմորեն»:

Համերգին ներկա էին ջազի շատ երկրպագուներն ու հայտնի ջազմեններ, որոնք միանշանակ բարձր գնահատեցին ամերիկացի ջազմենի կատարողական արվեստը եւ իմպրովիզացիոն նորամուծությունները: Ուրի Քեյնը Հայաստանից մեկնելուց առաջ հյուրընկալվեց «Մալխաս» ջազ ակումբում եւ ծանոթացավ հայկական ջազի ներկայացուցիչների ելույթներին:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱԲՅԱՆ

Աղամանների ցուցահանդես՝ ՆԱՄ-ում

Հունիսի 27-ին «Նարեկացի» արվեստի միությունում բացվեց հայկական աղամանների ցուցահանդեսը:

Աշխատանքների հեղինակները երեխաներն են՝ «Տերրակոտտա» մանկական խմբի սաները: Խմբի գեղարվեստական ղեկավարն է **Նանա Մանուչարյանը**:

Բացման խոսքում Ն. Մանուչարյանը շեշտեց փաստը, որ իրենք չեն պատրաստում շուկայական նմուշներ. «Սիրելի երեխաներ, այս աշխատանքներից յուրաքանչյուրն ունեն ձեզնից մի մաս, եւ նրանք այլեւս չեն կրկնվում»,- ասաց նա՝ նշելով, որ այս ցուցահանդեսի նպատակը նաեւ երեխաներին ոգեշնչելն է, որպեսզի սեպտեմբերից սկսած նրանք ավելի ոգեւորված սկսեն աշխատել, ստեղծագործել:

Նանայի խոսքերով տեղեկատվական այս ժամանակաշրջանում, երբ ամեն կողմից նոր ինֆորմացիա ենք ստանում, մեր ուղեղում առաջանում է մշակութային քաոս, ուստի այս պարագայում շատ կարեւոր է, որ մենք նախ մերը ճանաչենք, մեր մշակույթը, որից հետո էլ կկարողանանք ճանաչել մյուսներինը:

Այս իմաստով աղամանները կարեւոր նշանակություն ունեն. «Կանացի կերպարներով աղամաններ միայն Հայաստանի տարածաշրջանում են պատրաստում, սա տիպիկ հայկական է», նշեց Նանան՝ շնորհակալություն հայտնելով ՆԱՄ-ին ցուցահանդեսի կայացմանն աջակցելու համար:

Իր հերթին ՆԱՄ նախագահ **Նարեկ Հարությունյանը** նշեց, որ ուրախ է ՆԱՄ-ում այսպան տաղանդավոր երեխաների աշխատանքներ տեսնել:

Ցուցահանդեսին մասնակցում են 6-14 տարեկան 20 երեխա:

«Սա «Հռիփսիմեն է: Նա շատ նման է իմ հայրիկի տատիկին. նրա նման ուրախ է, աշխատասեր», բացատրում է 11-ամյա **Լուսին Հարությունյանը**:

Իսկ ահա 14-ամյա **Ադրա Խաչատուրյանն** իր աղամանը «Մարե» է կոչել: Աղամանն՝ ինչպես մայր. «Հղի կին է, կյանք կա մեջը»,- մեկնաբանում է նա:

Խմբի ամենափոքրիկ անդամներից **6-ամյա Սոֆյան** էլ «Լիլիթ» է կոչել իր աղամանը:

«Սրբուհի», «Նարի», «Հարփի», «Հոռոմ» «Անի», «Անահիտ».... Երեխաների կողմից ստեղծված կանացի հայ կերպարներով աղամանների ցուցահանդեսը կարող եք դիտել «Նարեկացի» արվեստի միությունում մինչեւ հուլիսի 2-ը:

ՄԱԲԻԱՄ ՄՈՒՂՈՒՍՅԱՆ
«Նարեկացի» արվեստի միություն

Հ. Գ. - «Տերրակոտտա» մանկական խմբակն այս պահին ունի տարածքի եւ վառարանի խնդիր: Խմբակին այս հարցում օգնել ցանկացողները կարող են զանգահարել 093 84 04 25 հեռախոսահամարով:

Հայ բռնցքամարտիկներից երեքը կիսաեզրափակիչում են

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում Հայաստանը ներկայացնող 13 բռնցքամարտիկներից ասպարեզում մնացել են ընդամենը 3-ը՝ մտնելով կիսաեզրափակիչ: Նրանք նվազագույնն իրենց համար ապահովել են բրոնզե մեդալները:

Մինչեւ 44-46 կգ քաշային կարգում հաջող է հանդես գալիս Հրայր Շահվերդյանը: Նա հաղթել է լեհ Թոմաշ Վոյչիկին (19-5), թուրք Ռաֆֆ Կիրուլեյմանօղլուն (15-12) եւ Գերմանիան ներկայացնող Ռաուլ Կրուգերին (17-11):

Կիսաեզրափակիչի ուղեգիր է նվաճել նաեւ Էրիկ Պետրոսյանը մինչեւ 52 կգ քաշային կարգում: Առաջին մենամարտում նա 10-4 հաշվով հաղթեց բելառուս Նիկոլայ Շախին, ապա հաջորդաբար պայքարից դուրս մղեց ռուսաստանցի Զաբրաիլ Վիզիրխանովին (15-8) եւ վրացի Գեորգի Ցիսկարիշվիլուն (6-5):

Բրոնզե մեդալն ապահոված մեր 3-rդ մասնակիցը Նարեկ Մանասյանն է: Նա մինչեւ 75 կգ քաշայինների մրցավեճին մասնակցեց 2-rդ փուլից: Առաջին մենամարտում Նարեկը 12-9 հաշվով պարտության մատնեց ուկրաինացի Ալեքսանդր Բելոսոցկուն, իսկ հաջորդ մրցավեճը բելառուս Նիկիտա Սամցոուի հետ շահեց 2-rդ ռաունդում:

Հաջողությանը մոտ էր նաեւ 54 կգ քաշային կարգում հանդես եկած Սամվել Մելիքյանը: Նա բելառուս Սերգեյ Բահուսկիին (19-5) եւ Ֆինլանդիայի ներկայացուցիչ Դոնաս Վիկտորովին (15-6) հաղթելուց հետո քառորդ եզրափակիչում պարտվեց ուկրաինացի Վիկտոր Պետրովին (7-18): Նշենք, որ 7 հայ բռնցքամարտիկներ ռինգը թողեցին հենց առաջին մենամարտից հետո: Ընդ որում Արթուր Ավդալյանը (80 կգ), Կորյուն Պապոյանը (70 կգ) պարտվեցին ադրբեջանցիներին, իսկ Նասիբ Պողոսյանը (50 կգ) զիջեց թուրքին:

Իսպանացիները կրկին եզրափակիչում են

Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի հավաքականը 2-rդ անգամ անընդմեջ հանդես կգա հին աշխարհամասի առաջնության եզրափակիչում: Իսպանացիներն այդ իրավունքը նվաճեցին կիսաեզրափակիչ մրցախաղում հետխաղյա 11 մ հարվածներով պորտուգալացիներին հաղթելու շնորհիվ (4-2): Եվրոպայի առաջնությունում 2-rդ անգամ խաղի հիմնական եւ լրացուցիչ ժամանակում դարպասները մնացին անառիկ եւ հաջորդ փուլի ուղեգրի հարցը վճռվեց 11 մ հարվածաշարով: Հիշեցնենք, որ նույն կերպ կիսաեզրափակիչի ուղեգիր էին նվաճել իտալացիները՝ հաղթելով անգլիացիներին:

Իսպանիայի հավաքականը դարձավ Եվրոպայի առաջնության եզրափակիչի առաջին մասնակիցը: Հուլիսի 1-ին Կիեւում կայանալիք եզրափակիչում իսպանացիների մրցակիցը որոշվեց երեկ ուշ երեկոյան:

Իսպանիայի հավաքականը Եվրոպայի առաջնություններում անպարտելիության նոր ռեկորդ սահմանեց: 2008-ի առաջնության մեկնարկից մինչեւ օրս իսպանացիներն անցկացրած 11 անընդմեջ հանդիպումներում չեն պարտվել: Վիսենտե դել Բոսկեի սաները գերազանցեցին Հոլանդիայի, Գերմանիայի եւ Իտալիայի հավաքականներին, որոնք Եվրոպայի առաջնություններում 10 խաղ անընդմեջ չէին պարտվել:

Խաղի մասին պորտուգալացիների առաջատար **Քրիշտիանու Ռոնալդուն** հետեւյալ կարծիքն է արտահայտել. «Պարտությունից հետո մշտապես անբավարարվածության եւ անարդարացիության զգացում ես ունենում: Սակայն մենք պարտվեցինք այնպիսի թիմի, ինչպիսին Իսպանիան է, ուստի կարող ենք հպարտանալ մեզանով: Իհարկե, սա շատ ծանր պահ է մեր հավաքականի համար, քանի որ 2 11 մ հարված չիրացրինք: Պորտուգալիայի հավաքականը շատ հավասարակշռված թիմ է: 11 մ հարվածաշարից առաջ գլխավոր մարզչի հետ խորհրդակցում էի, թե որերորդն եմ հարվածելու: Նա ասաց, որ լինելու եմ 5-rդը: Ամեն դեպքում Եվրոպայի առաջնությունից հեռանում ենք գլուխները բարձր: Իսպանացիները 2 հաջող փոխարինում կատարեցին՝ խաղադաշտ մտցնելով Պեդրոյին եւ Նավասին: Մենք մի քանի լավ հնարավորություն ունեինք գոլ խփելու, սակայն մարզական բախտը ժպտաց իսպանացիներին: Իսպանացիներին ծանր կլինի եզրափակիչում, որում նրանց հաջողություն եմ մաղթում: Այդ երկրում բնակվում են իմ ընկերները, ինքս էլ այնտեղ եմ խաղում: «Ռեալի» իմ խաղընկերների հետ խաղադաշտից դուրս մենք ընկերներ ենք, իսկ ահա խաղադաշտում դառնում ենք մրցակիցներ»:

Ահա նաեւ հավաքականների գլխավոր մարզիչների կարծիքը:

Վիսենտե դել Բոսկե (Իսպանիա) - Հավասար խաղ էր: Գուցե լրացուցիչ ժամանակում մենք ավելի լավ խաղացինք, քանի որ պորտուգալացիների մոտ զգալ էր տալիս հոգնածությունը: Իսկ մինչ այդ հաջողության հասնելու մեր հնարավորությունները նվազագույնն էին: Մեզ դժվար էր հաղթահարել պորտուգալացիների պաշտպանական պատնեշը: Առջեւում եզրափակիչ հանդիպումն է, որում ֆուտբոլիստները պետք է ներդնեն իրենց ողջ ունակությունները: Մյուս կիսաեզրափակիչի մասնակիցների ուղեգիր նվաճելու հնարավորությունները հավասար եմ գնահատում:

Պաուլու Բենտու (Պորտուգալիա)- Լրացուցիչ ժամանակում իսպանացիներն ավելի լավ խաղացին: Դել Բոսկեն 2 շաս ճիշտ փոխարինում կատարեց, ինչը թարմություն հաղորդեց իսպանացիների գործողություններին: Իսկ ահա հիմնական ժամանակում, հատկապես 1-ին խաղակեսին մենք բավականին հաջող խաղացինք, ավելի շաս գոլային պահեր ստեղծեցինք: Շատ էինք ցանկանում եզրափակիչ մտնել, սակայն պարտվեցինք 11 մ հարվածներով: Մենք մրցակցից վատ չխաղացինք, սակայն այսպիսին է ֆուտբոլը:

Քորոդյուկը կգլխավորի ՌԴ հավաքականը

Ռուսական լրատվամիջոցների տեղեկացմամբ երկրի ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակվելու Ալեքսանդր Բորոդյուկը, որը Դիկ Ադվոկատի օգնականն էր: Մինչեւ այդ էլ նա հավաքականում որպես 2-rդ մարզիչ է աշխատել Գուս Հիդինգի օրոք:

Նշվում է, որ Բորոդյուկի թեկնածությունը համաձայնեցվել է երկրի կառավարության մակարդակով եւ պայմանավորված չի լինի ՌԴ ֆուտբոլային միության նոր նախագահի անձից: Այդ պաշտոնն ամենայն հավանականությամբ կստանձնի Ռուսաստանի օլիմպիական կոմիտեի գործադիր տնօրեն, պրոֆեսիոնալ ֆուտբոլային լիգայի նախկին նախագահ Նիկոլայ Տոլստիխը:

ՏԱՆԵՐԱՄԱՐՏ

Հայ ծանրոցորդները ՌԴ չեմպիոններ

Վլադիմիրում կայացած ծանրամարտի ՌԴ երիտասարդական առաջնությունում գերազանց ելույթ ունեցան հայ ծանրոցորդներ Արմեն Ալեքյանն ու Ալեքսանդր Սաֆարյանը՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Արմենը մինչեւ 69 կգ քաշային կարգում երկամարտում ցույց տվեց 310 կգ (140+170) արդյունք: Կրասնոդարցի ծանրոցորդը 2-rդ տեղը գրաված Ֆելիքս Խալիբեկովին գերազանցեց 10 կգ-ով:

Սանկտ Պետերբուրգում բնակվող Ալեքսանդր Սաֆարյանն էլ ուժեղագույնն էր մինչեւ 77 կգ քաշայիններին մրցավեճում: Նա էլ 16 կգ-ով առաջ անցավ արծաթե մեդալակիր Մարսել Ախմետովից:

Հայ ծանրոցորդներն ընդգրկվեցին ՌԴ երիտասարդական հավաքականի կազմում եւ կմասնակցեն տարեվերջին Իսրայելի էլիաթ քաղաքում անցկացվելիք Եվրոպայի առաջնությանը:

Ռոբերտ Արզումանյանը հեռացավ «Յագելոնիայից»

Armsport.am-ի տեղեկացմամբ, Ռոբերտ Արզումանյանը փոխադարձ համաձայնությամբ խզել է պայմանագիրը լեհական «Յագելոնիայի» հետ: Այդ թիմում նա հայտնվել էր անցյալ տարվա ձմռանը: Հայ ֆուտբոլիստին այդպես էլ չհաջողվեց ամրագնդվել թիմի կազմում: Պատճառներից մեկն էլ հաճախակի վնասվածքներն էին: Բավական ժամանակ «Յագելոնիան» չէր համաձայնում ազատ ֆուտբոլիստի կարգավիճակ տալ Արզումանյանին, որի պատճառով վերջինս հնարավորություն չուներ այլ ակումբ տեղափոխվելու:

Որակավորման փուլի արգելքը չհաղթահարվեց

Հելսինկիում մեկնարկած թեթեւատլետիկայի Եվրոպայի 21-rդ առաջնությունում 50 երկրների ներկայացուցիչների թվում են Հայաստանի 5 թեթեւատլետներ, որոնցից 4-ը մասնակցելու են Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերին: Մրցումների առաջին օրը մրցասպարեզ դուրս եկած մեր 3 մարզիկներն էլ անհաջող հանդես եկան՝ չհաղթահարելով որակավորման փուլի արգելքը:

Գյումրեցի նիզականետորդ Մելիք Ջանոյանը 72 մ 59 սմ արդյունքով 29 մասնակիցների մեջ գրավեց 21-rդ տեղը: Նշենք, որ Ջանոյանն օլիմպիական վարկանիշ էր ձեռք բերել 79 մ 71 սմ արդյունքով: Ավելի համեստ էր նրա համաքաղաքացի, նիզականետորդ Քրիստինե Հարությունյանի ելույթը: Վերջինս 45 մ 83 սմ արդյունքով 23 մասնակիցների մեջ զբաղեցրեց վերջին տեղը: Նշենք, որ Քրիստինեն էլ օլիմպիական վարկանիշ էր ձեռք բերել 59 մ 12 սմ արդյունքով: Ինչ խոսք, օլիմպիական խաղերի մեկնարկից առաջ մեր մարզիկների ցածր ցուցանիշները պետք է մտահոգեն մարզիչներին:

Կանանց 400 մետր արգելավազքում 58,27 վրկ արդյունքով Ամալյա Շառոյանը 27 մասնակիցների մեջ գրավեց 24-rդ տեղը:

Էտո'Օ-ին խիստ պատիժ է սպառնում

Մախաչկալայի «Անժիի» հարձակվող Սամուել Էտո՛Օ-ին բանտարկություն է սպառնում հարկերի չվճարման համար: Խոսքը վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ կոտդիվուարցի ֆուտբոլիստը հանդես էր գալիս «Բարսելոնում» 2006-2009-ին: Այդ ընթացքում Էտո՛Օ-ն Իսպանիայի պետությանը մոտ 3,5 մլն եվրո է պարտք:

Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունն արդեն քրեական գործ է հարուցել կոտդիվուարցի ֆուտբոլիստի դեմ: Ակումբից եւ «Պումա» ֆիրմայից ստացած գումարից ամբողջությամբ հարկերը վճարելու փոխարեն Էտո՛Օ-ն իր միջոցները ներդրել էր Իսպանիայում եւ Հունգարիայում գտնվող 2 ընկերություններում: Նշենք, որ Իսպանիայում գտնվող այդ ընկերությունը երկրի օրենսդրության համաձայն 45 տոկոսի փոխարեն 30-35 տոկոս հարկեր է վճարում:

Իսպանական օրենսդրությամբ մեծ չափերով հարկերի վճարումից խուսափելու դեպքում մեղավորները պատժվում են 1-5 տարվա ազատազրկմամբ, ինչպես նաեւ տուգանվում են ունեցած պարտքի 200-պատիկի չափով:

Քերտ վան Մարվեյկը հրաժարական տվեց

Հոլանդիայի հավաքականի գլխավոր մարզիչ Բերտ վան Մարվեյկը հրաժարականի դիմում է ներկայացրել, որն ընդունել է երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը՝ խզելով նրա հետ մինչեւ 2016-ի Եվրոպայի առաջնության ավարտը կնքած պայմանագիրը:

Այս որոշումը Մարվեյկը միանգամից չի ընդունել: Պորտուգալացիների հետ խաղից հետո նա հայտարարել էր, որ դեռեւս չի վճռել, թե ինչ քայլի դիմի: Համենայնդեպս ֆեդերացիա ներկայացրած իր հաշվետվություններում Մարվեյկը Եվրոպայի առաջնությունում հավաքականի անհաջող ելույթների հիմնական մեղքը բարդել էր 5 ֆուտբոլիստների վրա: Նա խոստացել էր Հալիդ Բուլահրուզին, Յորիս Մատեյսենին, Զոն Հեյտինգային, Ռաֆայել վան դեր Վարտին եւ Կլաս-Յան Հունտելարին այլեւս չհրավիրել հավաքական: Հարցականի տակ էր նաեւ Դիրկ Կույտի հետագա մասնակցությունը հավաքականի հանդիպումներին:

Այսպիսով հոլանդացի երկու անվանի մարզիչներ՝ Դիկ Ադվոկատն ու Բերտ վան Մարվեյկը հեռացան իրենց գլխավորած հավաքականներից: Ճիշտ է, Ադվոկատի պայմանագրի ժամկետն արդեն լրացել էր: Ռուսաստանում այս օրերին այսպիսի մի անեկդոտ է «ծնվել»: Դիկ Ադվոկատը դիմելով Աստծուն, ասում է. «Երբ ես խնդրում էի, որ մենք Եվրոպայի առաջնությունում հանդես գանք հոլանդացիների նման, այլ բան նկատի ունեի»:

Հիշեցնենք, որ Մարվեյկի գլխավորությամբ Հոլանդիայի հավաքականը 2 տարի առաջ Հարավաֆրիկյան Հանրապետությունում կայացած աշխարհի առաջնությունում փոխչեմպիոն էր դարձել, իսկ Եվրո-2012-ի ընտրական մրցախաղերում հիանալի խաղ էր ցուցադրել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՕՐԱԿԱՐԳ

Ս. թ. հուլիսի 4-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կկայանա վիճակախաղերի, շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստ՝

▼ «Ինտեր Լոտո» ՍՊԸ (ՎԽ-019 լիցենզիա) կողմից ներկայացված վիճակախաղի (տոտալիզատորի) կազմակերպման անցկացման կանոնակարգին համաձայնություն տալու հարցի քննարկում:

▼ «Տատյանա» ՍՊԸ (ՇԽ-206 լիցենզիա) շահումով խաղի կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հարցի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

«ՋԵՆԵՐԱԼ ՍՏԱՆԴԱՐԴ ՔԸՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
Արտակարգ տրամադրություն 39/9, 4-րդ հարկ, 84 սենյակ
Անկախ աուդիտորական եզրակացություն

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի հիմնադրին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ «ՊՈԱԿ») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման հաղորդագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին հսկողության համակարգի մշակումը, կիրառումը եւ պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան հաղորդագրության ընտրությունը եւ կիրառումը, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետեւենք էթիկայի պահանջներին եւ աուդիտը ոլորտավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ եզրակացություն ստանալու համար:

Աուդիտորական ընթացակարգերը իրականացվում են այնպիսի ձեւով, որ թույլ տան ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման հաղորդագրության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են եւ համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Վերապահումով դրական կարծիքի հիմք

ՊՈԱԿ-ը հինգնամյա միջոցների հաշվապահական հաշվառման գրառումները վարել է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջներին համաձայն: ՊՈԱԿ-ը չի վարել հինգնամյա միջոցների հաշվապահական հաշվառման բավարար գրառումներ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների համաձայն, ինչպես նաեւ չի կիրառել հետեւողական մոտեցում հինգնամյա միջոցների ընտրված դասերի վերաչափման նկատմամբ, ինչը պահանջվում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Գործնականորեն նպատակահարմար չէր հավաստել հինգնամյա միջոցների 3,620,805 հազար դրամ (31 դեկտեմբերի 2010 թ.՝ 3,619,488 հազար դրամ) գումարով հաշվեկշռային արժեքի եւ 351,029 հազար դրամ (31 դեկտեմբերի 2010 թ.՝ 300,835 հազար դրամ) գումարով մաշվածության ծախսի ճշգրտությունը, ինչպես նաեւ հարկերի վրա համապատասխան ազդեցությունները:

ՊՈԱԿ-ը չի վարել պաշարների հաշվապահական հաշվառման բավարար գրառումներ ինչը պահանջվում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Գործնականորեն նպատակահարմար չէր հավաստել պաշարների 155,683 հազար դրամ (31 դեկտեմբերի 2010 թ.՝ 226,103 հազար դրամ) մնացորդի ճշտությունը, ինչպես նաեւ ինքնարժեքի վրա համապատասխան ազդեցությունները:

Վերապահումով կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ վերապահումով դրական կարծիքի հիմքում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, ֆինանսական հաշվետվությունները, տալիս են 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Այլ հարցեր

ՊՈԱԿ-ի 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ եւ այդ ամսաթիվ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է այլ աուդիտորական ընկերություն եւ ներկայացրել է դրական վերապահումով կարծիք՝ 5 դեկտեմբերի 2011-ի ամսաթվով այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

«Ջենեռալ Ստանդարդ Քընսալթինգ» ՍՊԸ

Վլադիմիր Հարությունյան
Տնօրեն

Անդրանիկ Հարությունյան
Աուդիտոր

25 հունիսի 2012 թ.

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծնթգ.	2011 թ.	2010 թ. Վերահաշվարկված	1 հունվարի 2010 թ. Վերահաշվարկված
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	13	3,620,805	3,619,488	3,004,092
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		116,570	12,594	-
Հետաձգված հարկային ակտիվ	16	63,207	52,573	33,975
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		3,800,582	3,684,655	3,038,067
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	14	155,683	226,103	158,167
Առուտրային եւ այլ դեբիտորական պարտքեր	15	280,159	436,804	568,794
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով		7,046	6,012	66,994
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	17	601,061	480,264	239,750
Այլ ընթացիկ ակտիվներ		9,552	9,366	7,661
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1,053,501	1,158,549	1,041,366
Ընդամենը ակտիվներ		4,854,083	4,843,204	4,079,433
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Սեփական կապիտալ				
Ձեռքբերված շահույթ		4,282,926	4,059,215	3,475,180
Ընդամենը սեփական կապիտալ		4,282,926	4,059,215	3,475,180
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ստացված շնորհներ	18	115,944	99,763	103,938
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		115,944	99,763	103,938
Ընթացիկ պարտավորություններ				
Ստացված շնորհներ	18	-	17,993	14,743
Առուտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր	19	454,745	665,762	485,214
Այլ ընթացիկ պարտավորություններ		468	471	358
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		455,213	684,226	500,315
Ընդամենը պարտավորություններ		571,157	783,989	604,253
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ		4,854,083	4,843,204	4,079,433

Ռուբեն Միրզախանյան
Ռեկտոր
25 հունիսի 2012 թ.

Նարինե Աղաջանյան
Գլխավոր հաշվապահ

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթգ.	2011 թ.	2010 թ. Վերահաշվարկված
Հասույթ	5	3,962,670	3,919,511
Ինքնարժեք	6	(2,776,301)	(2,324,562)
Համախառն շահույթ		1,186,369	1,594,949
Այլ եկամուտ	8	100,355	140,248
Վարչական ծախսեր	7	(884,482)	(820,338)
Այլ ծախսեր	9	(51,305)	(81,157)
Գործառնական գործունեության արդյունքները		350,937	833,702
Ֆինանսական եկամուտներ	11	1,177	-
Ֆինանսական ծախսեր	11	(53,168)	(93,005)
Զուտ ֆինանսական ծախսեր		(51,991)	(93,005)
Այլ ոչ գործառնական եկամուտ		5,268	440
Շահույթ մինչեւ շահութահարկով հարկումը		304,214	741,137
Շահութահարկի գծով ծախս	12	(80,503)	(157,102)
Շահույթը եւ ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		223,711	584,035

Ռուբեն Միրզախանյան
Ռեկտոր
25 հունիսի 2012 թ.

Նարինե Աղաջանյան
Գլխավոր հաշվապահ

«ՋԻ ԸՆԴ ՔՈ. ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ՀՀ. ք. Երեւան, Լենինգրադյան 4ա
Լիցենզիա ԱԾ N086
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «Փարահար» Գինու-Կոնյակի Տուն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Փարահար» Գինու-Կոնյակի Տուն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2010 եւ 2011 թվականների դեկտեմբերի 31-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման հաղորդագրությունն եւ այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար, եւ այնպիսի ներքին վերահսկողության համար, ինչպիսին որ ղեկավարությունը անհրաժեշտ է համարում ունենալ՝ խարդախության կամ սխալի պատճառով էական խեղաթյուրումից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելը: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք համապատասխանենք վարքագծի պահանջներին եւ աուդիտը ոլորտավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ եզրակացություն ստանալու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ: Ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը դիտարկում է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողությունը՝ նպատակ ունենալով նախագծել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ՝ կիրառված հաշվապահական հաշվառման հաղորդագրության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ ու համապատասխան են՝ մեր վերապահումներով դրական կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Վերապահումով դրական կարծիքի հիմք

Մենք հաստատվել ենք որպես ընկերության աուդիտորներ 2012 թ. մարտի 5-ին եւ այդ պահից չենք հեռացել 2010 եւ 2011 թվականների տարեվերջի պաշարների փաստացի գույքագրմանը: Մենք ի վիճակի չենք եղել այլընտրանքային միջոցներով համոզվել 2010 եւ 2011 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների առկա ճանկության վերաբերյալ: Հաշվի առնելով, որ պաշարների սկզբնական մնացորդները մասնակցում են ֆինանսական արդյունքի եւ ֆինանսական վիճակի որոշմանը, մենք ի վիճակի չենք եղել որոշելու, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ հաշվետու տարիների շահույթի առնչությամբ՝ հաշվարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ եւ պաշարների մնացորդի առնչությամբ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Վերապահումով դրական կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ վերապահումով դրական կարծիքի հիմքում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2010 եւ 2011 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Փարահար» Գինու-Կոնյակի Տուն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, եւ նույն ամսաթվերին ավարտված տարիների ֆինանսական արդյունքները եւ դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հաստատված է
«Ջի ընդ Քո. Աուդիտ» ՍՊԸ
Տնօրեն Գ. ՂԼԹՉՅԱՆ
Աուդիտոր
Որակավորման վկայական թիվ 168 Ա. ՉԱՏԻՆՅԱՆ
27 հունիսի 2012 թ., Երեւան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Փարահար» Գինու-Կոնյակի Տուն ՍՊԸ
առ 31-ը դեկտեմբերի 2010 եւ 2011 թթ. դրությամբ

	Ծանոթագրություններ	31.12.2011 հազ. դրամ	31.12.2010 հազ. դրամ	31.12.2009 հազ. դրամ
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	3	979	3,014	4,860
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		979	3,014	4,860
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	4	586,005	633,619	163,630
Առուտրային եւ այլ դեբիտորական պարտքեր	5	941,144	434,937	338,593
Ընթացիկ հարկերի գծով գերավճարներ	6	11,075	28	32,102
Տրված փոխառություններ	7	1,276,164	92,525	234,740
Դրամական միջոցներ եւ համարժեքներ	8	598,460	320,478	91
Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով	9	423,627	429,735	3,172
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,836,475	1,911,322	772,328
Ընդամենը ակտիվներ		3,837,454	1,914,336	777,188
Սեփական կապիտալ եւ պարտավորություններ				
Սեփական կապիտալ				
Կանոնադրական կապիտալ		50	50	50
Ձեռքբերված շահույթ		364,098	127,154	(19,366)
Ընդամենը սեփական կապիտալ		364,148	127,204	(19,316)
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր եւ փոխառություններ	10	-	210,033	461,656
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	210,033	461,656
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր եւ փոխառություններ	11	1,429,230		
Առուտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր	12	1,939,813	1,512,449	310,293
Ընթացիկ հարկային պարտավորություններ	13	103,145	62,953	21,838
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով		1,118	1,697	2,717
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,473,306	1,577,099	334,848
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ		3,837,454	1,914,336	777,188

Տնօրեն՝
Ա. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Որակավորված հաշվապահ
Ն. ԱՆՏՈՅԱՆ
(Որակավորման վկայական N 0527)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
«Փարահար» Գինու-Կոնյակի Տուն ՍՊԸ
2010 եւ 2011 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար

	Ծանոթագրություններ	2011 հազար դրամ	2010 հազար դրամ	2009 հազար դրամ
Հասույթ	14	1,214,527	790,357	448,984
Ինքնարժեք	15	(380,371)	(318,729)	(117,547)
Համախառն շահույթ		834,156	471,628	331,437
Այլ եկամուտներ	16	616	3,443	-
Իրացման ծախսեր	17	(256,542)	(113,967)	(48,185)
Վարչական ծախսեր	18	(77,486)	(87,885)	(152,930)
Այլ ծախսեր	19	(15,026)	(22,050)	(8,110)
Գործառնական շահույթ		485,718	251,169	122,212
Ֆինանսական ծախսեր	20	(56,748)	(76,181)	(74,341)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)		21,812	10,931	(56,049)
Շահույթը մինչեւ հարկումը		450,782	185,919	(8,178)
Շահութահարկի գծով ծախս	21	(86,685)	(39,399)	(11,189)
Շահույթ հարկումից հետո		364,097	146,520	(19,367)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Սեփական կապիտալում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		364,097	146,520	(19,367)

Տնօրեն՝
Ա. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Որակավորված հաշվապահ
Ն. ԱՆՏՈՅԱՆ
(Որակավորման վկայական N 0527)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
«Փարահար» Գինու-Կոնյակի Տուն ՍՊԸ
2010 եւ 2011 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար

հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 01 հունվար 2009 թ.	50	141,685	141,735
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր	-	-	-
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	(19,366)	(19,366)
Շահաբաժիններ	-	(141,685)	(141,685)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2009 թ.	50	(19,366)	(19,316)
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր	-	-	-
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	146,520	146,520
Շաղաբաժիններ	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2010 թ.	50	127,154	127,204
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր	-	-	-
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	364,097	364,097
Շահաբաժիններ	-	(127,153)	(127,153)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2011 թ.	50	364,098	364,148

Տնօրեն՝
Ա. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Որակավորված հաշվապահ
Ն. ԱՆՏՈՅԱՆ
(Որակավորման վկայական N 0527)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Փարահար» Գինու-Կոնյակի Տուն ՍՊԸ
2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2011-31.12.2011 հազ. դրամ	01.01.2010-31.12.2010 հազ. դրամ	01.01.2009-31.12.2009 հազ. դրամ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	320,478	91	3,921
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	-		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	3,686,491	914,135	311,556
Գործառնական այդ գործունեությունից	90,426	52,060	38,245
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	3,776,917	966,195	349,801
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր			
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	2,748,017	112,789	10,356
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	131,263	59,689	50,327
Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից	39,167	54,593	68,439
Վճարումներ բյուջե	75,458	31,844	34,171
Վճարումներ սոցիալական ապահովության հիմնադրամ	7,370	9,402	4,698
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	110,675	63,075	7,352
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	3,111,950	331,392	175,343
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	664,967	634,803	174,458
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր			
Ոչ ընթացիկ, նյութական եւ ոչ նյութական ակտիվների վաճառքներից	1,200		
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	-	-	
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր	-		
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	1,200	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր			
Ոչ ընթացիկ, նյութական եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	232		
Փոխառությունների տրամադրումից	37,000	-	31,900
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	37,232	-	31,900
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(36,032)	-	(31,900)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր			
Ստացված վարկերից եւ փոխառություններից	144,093	-	129,703
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	144,093	-	129,703
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր			
Ստացված վարկերի եւ փոխառությունների մարումից	339,901	237,303	65,150
Վճարված շահաբաժիններ	127,153	-	141,685
Վճարված տոկոսներ	56,789	76,181	70,624
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	523,843	313,484	277,459
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(379,750)	(313,484)	(147,756)
Ընդամենը դրամական միջոցներից զուտ հոսքեր	249,185	321,319	(5,198)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	28,797	(932)	1,368
դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	598,460	320,478	91

Տնօրեն՝
Ա. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Որակավորված հաշվապահ
Ն. ԱՆՏՈՅԱՆ
(Որակավորման վկայական N 0527)

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 27.6.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: